

2384

Գ. Վ. ՊԵՏԻԱՆՈՎ.

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ԸՄԲՈՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1 մի
թ- 68

Պ Ե Տ Ա Բ Ա Տ

Ա Ր Ա Վ Ա Ն Ա Խ Ա Բ Ա Ն Ա Խ Ա Բ Ա Ն Ա Խ
Օ Ր Ե Ա Խ Ա Բ Ա Ն Ա Խ Ա Բ Ա Ն Ա Խ Ա Բ Ա Ն Ա Խ

Օ Ր Ե Ա Խ Ա Բ Ա Ն Ա Խ Ա Բ Ա Ն Ա Խ Ա Բ Ա Ն Ա Խ

Դ Խ Ա

Դ-68

ԿՎ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆ

01 JUL 2009

Գ. Վ. ՊԼԵԽԱՆՈՎ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ԸՄԲՈՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Տ.

Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏՎԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ • 1939

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Դ. Վ. Պլեխանովի «Պատմության մատերիալիստական ըմբռոնման մասին» աշխատությունը, վոր գրված ե Անտոնիո Լաբրիոլայի «Պատմության մատերիալիստական ըմբռոնման ուրագագծեր» գրքի առթիվ (կա ոռւսերենը), առաջին անգամ տպագրվել ե 1897 թ. «Նորու հայոց սեպանմբերյան գըրքում։ Հետագայում Պլեխանովը մտցրել է «Մեր քննադատների քննադատությունը» հավաքածուի մեջ, Պլեխանովի յերկերի ժողովածվում, մտել ե 1925 թ. հրատարակության VIII հատորի մեջ։

Այս աշխատությունը կարևորագույն տեղերից մեկն ե գրավում Պլեխանովի ուրիշ այն աշխատությունների մեջ, վորանք նվիրված են մարքսիզմը հիմնավորելուն և պաշտպանելուն և մարքսիստական ուսմունքը Ռուսաստանում պրոպագանդա անելուն, ինչպես՝ «Պատմության նկատմամբ մոնիստական հայցքի գարգացման հարցի շուրջը»։ «Պատմության մեջ անհատի ունեցած դերի հարցի շուրջը»։ Պլեխանովի՝ փիլիսոփայության հարցերին նվիրված աշխատությունների այս խմբին են առաջին հերթին վերաբերում 1921 թ. Լենինի գրած խոսքերը. «...ինձ տեղին ե թվում, վոր կուսակցության յերիտասարդ անդամներին նկատեմ, թե չի կարելի գիտակից, իսկական կոմունիստ գառնալ՝ առանց ուսումնասիրելու—հենց ուսումնասիրելու— այս ամենը, ինչ Պլեխանովը գրել ե փիլիսոփայության վերաբերյալ, վորովնեակ դա լավագույնն ե մարքսիզմի միջազգային ամբողջ գրականության մեջ» (Լենին, հ. XXVI, եղ 135):

Լաբրիոլայի գրքին ընդհանուր առմամբ գրական բնութագիր տալով՝ Պլեխանովն իր հոդվածը, ինչպես նաև 80 և 90-ական թվականների իր մի ամբողջ շարք ուրիշ աշխատությունները, բանավիճորեն սրբած ե Միխայլովսկու, Կուզերինի, Կարենեվի և ուրիշների ակադեմիկոսների պատճենիվ համար գետական առողջապահության մեջ։ Պլեխանովը այս աշ-

Г. В. ПЛЕХАНОВ
О МАТЕРИАЛИСТИЧЕСКОМ
ПОНЯМАНИИ ИСТОРИИ
Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939



իատության մեջ սուբյեկտիվիստ-նարոդնիկներին՝ մերկացնելու համար, վորոնք հանդիսանում եյին մարքսիզմի ամենավոխներիմ թշնամիները և հիմնական խոչընդուռ եյին Ռուսաստանում հեղափոխական շարժում զարգանալու և բանվոր դասակարգի քաղաքական մասսայական կուսակցություն ստեղծվելու ճանապարհին, դորձագրել և բանավիճային մի յուրահատուկ յեղանակ, վորի մասին նա հետագայում խոսել ե «Մեր քննադատների քննադատությունը» աշխատության առաջաբանում: Սուբյեկտիվիստների և նարոդնիկների հողվածներից Պէխանովը համոզվեց, վոր այդ պարոնները, մտքում պահելով մարքսիստների տերմինները, չեյին հասկանում այդ տերմինների եյությունը: «Էնթերցողներին նույնպես համոզելու համար,—գրում ե Պէխանովը, — յես վորոշեցի մեր պատմական թեորիան շարադրել աւրիշ խոսքերով. այդ արվեց ել հենց նոր հիշված հողվածում: Ստացվեց այս, ինչ յես սպասում եյի: Մեր ամենախոզըր հակառակորդներից մեկը, առանց հասկանալու, թե ինչումն ե բանը, աղաղակեց, թե յես հրաժարվել եմ «տնտեսական մատերիալիզմից»: Յես ցնծում եյի և նրա համար պատրաստել եյի, — ինչպես Զայցկին և արտահայտվում, — «վորոտալի պատասխան»: Բայց այն հրաժարակությունը, վորաեղ պետք ե լույս տեսներ այդ պատասխանը, դադարեցվեց, և իմ պատասխանը մնաց չոպագրված: Այժմ արդեն ժամանակը չե այն տպագրելու...»: Հետագայում այսպես եր գրում Պէխանովը սուբյեկտիվիստների խայտառակ տպիտության այդ փաստի մասին:

«Պատմության մատերիալիստական ըմբռնման մասին» աշխատության մեջ Պէխանովը պսակագերծ ե անում այսպես կոչված՝ ֆակտորների թեորիան, վորոնք անդամատում են հասարակական մարդու գործունեյությունը և նրա տարբեր կողմերն ու արտահայտությունները դարձնում են հասարակ ուժեր, վորոնցով իրան թե վորոշվում ե հասարակության պատմական շարժումը: «Պատմական ֆակտորները», — գրում ե Պէխանովը, — հասարակ արստրակցիաներ են դուրս գալիս, և, յերբ անհետանում ե նրանց մասախուզը, պարզ ե դառնում, վոր մարդիկ կերտում են վոչ թե մեկը մյուսից տարբեր միքանի պատմություն—իրավունքի պատմություն, մորալի, փիլիսոփայության պատմություն և այլն, — այլ իրենց սեփական հասարակական հարաբերությունների միայն մեկ պատմությունը, վորոնք պայ-

մանավորվում են արտադրողական ուժերի գրությամբ յուրաքանչյուր տվյալ ժամանակ: Այսպես կոչված իդեոլոգիաները այդ միասնական և տնբաժան պատմարյան միայն բազմակերպ արտադրումներն են մարդկանց մեջում»:

Պէխանովը այդ հոդվածում ջախջախում ե սուբյեկտիվիստների փորձերը՝ պատմության մատերիալիստական ըմբռնումը ներկայացնել վորակու «տնտեսական մատերիալիզմի» թեորիա, վորը մեխանիկորեն պատմական պրոցեսի ամբողջ բազմակերպությունը հանգեցնում ե անմիջականորեն տնտեսական ֆակտորի, այն բանին, վոր «տնտեսական» «գործում ե ինքնին, առանց մարդկանց վորեն մատնակցության» (Պէխանով, հ. VII, եջ 260): Ինչպես հայտնի յե, գեսես Ենգելման եր ամենավճռական կերպով գուրս գալիս զրա գեմ: 1890 թ. սեպտեմբերի 21-ին Բլուխին զրած նամակում Ենգելմանը գրում եր, «Պատմության մատերիալիստական ըմբռնման համաձայն՝ պատմական պրոցեսում վորոշող մոմենտ վերջին հաւելված հանդիսանում է իրական կյանքի արտադրությունն ու վերարտադրությունը: Վոչ յես, վոչ ել Մարքսը ավելին չենք պնդել: Յեթև վորեն մեկը խեղաշյուրի այդ գրույթն այն իմաստով, թե իրը տնտեսական մոմենտն ե միակ վորոշող մոմենտ հանդիսանում, այն ժամանակ այդ պնդումը գառնում ե վոչինչ չասող, արտարակտ, անիմաստ Փրադ: Տնտեսական գրությունը—զա հիմքն ե, բայց պատմական պայքարի ընթացքի զրա աղգեցություն ունենում են և շատ գեղեցրում գլխավորապես նրա ձևը վորոշում վերնաշենքի դանազան մոմենտները՝ գասակարգային պայքարի քաղաքական ձևերը և նրա արգյունքները—տարած հաղթանակից հետո հաղթող դասակարգի սահմանած սահմանադրությունները և այն, իրավական ձևերը, և նույնին այդ բոլոր իսկական հակատամարտերի արտացոլումը մասնակիցների ուղեղում, քաղաքական, իրավական, փիլիսոփայական թեորիաները, կրօնական հայցքները և նրանց հետագա զարգացումն ու զոգմաների սիստեմ կազմելը... Դժբախտաբար, ամեն քայլափոխում յենթագրում են, թե լիովին հասկացել են նոր թեորիան և կարող են այն իռկույն եեթ կիրառել, հենց վոր յուրացված լինեն հիմնական գրաւթյունները, իսկ այդ բնավ միջու ել ճիշտ չե: Յես զրա համար կարող եմ շատ նորագույն «մարքսիստների» կշռամբել և զրա շնորհիվ յերեմն զարմանալի խառնափնթորություն և առաջացել».

(Մարտ և Ենգելս, «Նամակներ, Աղորատուկու խմբագրությամբ,
էջ 374, 375, 377: Հրատ. 1931 թ., Սոցեկ, Լենինգրադ):

Պլեխանովը Ենգելսի՝ բերված ցուցումների վոգով ցույց է տալիս, վոր պատմության մատերիալիստական ըմբռնումը «տընտեսական մատերիալիզմի» հանգեցնելը ավելի քան սիսալ է: Նա ցույց է տալիս, վոր առւբյեկտիվիստաները նման խեղաթյուրում թույլ են տալիս դիտավորյալ կերպով, նպատակ ունենալով պայքարել մարդկոմի գեմ, վորովհետև «յերջանկահիշատակ տնտեսական մատերիալիստների փառտարկներն ավելի հեշտ են հերքել, քան մատերիալիստ-դիտավեկտիկների փառտարկները» (Պլեխանով):

Պլեխանովը ցույց է տալիս, վոր տնտեսական մատերիալիզմի թեորիաներն անխուսափելիորեն տանում են դեպի ֆատալիզմ և իդեալիզմ: Նա ցույց է տալիս, վոր տնտեսական հարաբերություններն իրենք «հասարակական արտադրողական ուժերի գունդին» յեն հանդիսանում, այնինչ ամեն տեսակի իդեալիստների համար տնտեսական հարաբերությունները յեզել են «մարդկային բնուրյան գունդին» (Պլեխանով): Արտադրողական ուժերի վիճակը վերջին հաշվով վորոշում է բոլոր հասարակական հարաբերությունները և, ամենից առաջ, տնտեսական հարաբերությունները, դասակարգային հարաբերությունները, ապա իրավական հարաբերությունները, բարոյականության հարաբերությունները և, վերջապես, անուղղակի կերպով նաև մտքի ու յերևակայության բոլոր ստեղծածները՝ զիտությունը, արգեստը և այլն: Մարդու տվյալ յերկրի տնտեսական շարժումը յերբեք չի դիտել այն հասարակական ուժերի հետ նրա ունեցած կապից դուրս, վորոնք, ամելով այդ շարժման հաղի վրա, իրենք են ազդում նրա հետագա ուղղության վրա: Ուստի և «մատերիալիստ-դիտավեկտիկների և այն մարդկանց միջև, վարոնց անդիմ չեն, վոր կարելի յի Տեսեալիան մատերիալիստներ անվանել, մի ամբողջ անդունդ կա» (Պլեխանով):

Աշխատության հետագա մասում Պլեխանովը քննադատաբար վերլուծում է Լաբրիոլայի գրքի միքանի առանձին սխալները, վոր թույլ ե ավել հեղինակը, չնայած վոր ամբողջությամբ առաջ ճիշտ են նրա հիմնական դիրքերը, վորոնք չեն կարող ձեղք չբանալ իդեալիստական խեղաթյուրումների համար: Այդ պահանջեց հարկավոր և առանձնապես նշել Լաբրիոլայի ոխալ

Հայացքը պատմական զարգացման մեջ ուսույի և ուսայական առանձնահատկությունների ունեցած դերի վրա: Լաբրիոլան պնդում է, այն ել դոգմատիկորեն, առանց վորեւ ապացույց բերելու, վոր պատմական զարգացումը բարգանում և ուսայական առանձնահատկությունների աղդեցությամբ: Պլեխանովը ցույց է տալիս այդ թեորիաների սխալականությունը նույնիսկ նախապատմական ժողովուրդների համար, իսկ պատմական ժողովուրդների վերաբերյալ Պլեխանովը ուղղակի առում է, վոր Ծնրանց նկատմամբ ռասա բառը ընդհանրապես չի կարող և չպետք է գործադրվի: Մենք վոչ մի պատմական ժողովուրդ չենք ճանաչում, վորին կարելի լիներ անվանել մաքուր ուսայի ժողովուրդ: Նրանցից յուրաքանչյուրը զանազան եթնիկական տարրերի չափազանց աւագան և ուժեղ փոխադարձ խաչաձեման և խառնըման պատուղ է: Պլեխանովը ցույց է տալիս, վոր ուսայական հատկություններ վկայակոչելը նրանով և անհեթեթ, վոր հետազոտությունը զադարեցնում է հենց այստեղ, վորտեղ նա պետք է սկսվի: «Ինչու քրանսական պոեզիայի պատմությունը, —հարցում և Պլեխանովը ուսայական «թեորետիկներին», —նման չե պոեզիայի պատմությանը Գերմանիայում: Շատ հասարակ պատմուուի. Քրանսական ժողովուրդն այնպիսի խառնվածք ուներ, վոր չեր կարող ունենալ վոչ կեսունգ, վոչ Շիլլեր, վոչ Գյոթե: Դեռ, չնորդակալ ենք բացատրության համար. այժմ մենք ամեն ինչ հասկանում ենք»: Մեր որերում, վորոնք մի շարք կապիտալիստական յերկրների համար բնորոշ են Փաշիստական խավարապաշտության ու ուսայական չարամտություններով, Պլեխանովի աշխատության այս գլուխներն առանձնապես կենդանի հետաքրքրականություն են ստանում:

Պլեխանովը մարդկոմի հիմունքների վերաբերյալ վայրուն աշխատությունների մի սերիայով վճռական հարված հասցըն նարուկնիկությանը, մերկացըն նրա թեորիայի, տակտիկայի, պայքարի միջոցների հակագիտական, հականեղագոխական բնույթը:

Պլեխանովը ցույց տվեց, վոր ուսայական նարուկնիկները ըկալիստականի ուսուպիտական թեամբիներն են, գործով կտպիտականին ուժանդակությունը, մերկացըն նրա թեորիայի, տակտիկայի, պայքարի միջոցների հակագիտական, հականեղագոխական նարուկնիկության դեմ մինչեւ վերջ չհասցըն: Այդ աշխատանքն

90-ական թվականներին ավարտեց պրոլետարիատի մեծ առաջնորդ և բոլշևիկյան կուսակցության կազմակերպիչ Լենինը: Պետականովք չունեց նաև Ռուսաստանի և ամբողջ աշխարհի հեղափոխական շարժման զարգացման այդ ժամանակաշրջանի մի ուրիշ կարևորագույն խնդիրը՝ մարքսիզմը բանվորական շարժման հետ կապելը և նոր տիպի պրոլետարական կուսակցություն ստեղծելը, վորն ընդունակ լիներ նոր պայմաններում, իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանի պայմաններում, գլխավորելու պրոլետարիատի հեղափոխական պայքարը:

Այդ պատմական խնդիրների լուծումը միմիայն այնպիսի հանձարների ուժի բանն եր, ինչպես Լենինը և Ստալինը, վարոնք նոր դարաշրջանի պայմաններում մարքսիզմը հասցրին նոր ել ավելի բարձր աստիճանի և նրանով զինեցին բանվոր դասակարգի լայն մասսաները:

Պետանովը արդի դարաշրջանի խնդիրների մակարդակին չբարձրացավ, նա գերի մնաց II Խնտերնացիոնալի տրադիցիաներին և ավելի աւշ ժամանակի իր աշխատությունների մեջ վոչ միայն բայց արումը նոր մարքսիզմի հետագա զարգացման գեմ, այլ մի շարք նահանջներ կատարեց մարքսիստական վիլիստիայությունից և թույլ ավելց նրա առանձին խեղաթյուրություններ:

Բայց վերջինս չի նշանակում, թե մենք պետք ե արհամար հենք այն արժեքավորը, ինչ Պետանովն իր աշխատություններում ավել և իր գործունեյության լավագույնն, վաղ ժամանակը: Այնպիսի աշխատություններ, ինչպես «Պատմության նկատմամբ մոնիստական հայացքի զարգացման հարցի շուրջը», «Պատմության մեջ անհատի ունեցած գերի հարցի շուրջը», «Պատմության մատերիալիստական բրանման մասին», իրենց կարեռագույն նշանակությունը պահպանում են նաև այժմ: Նրանցով այժմ ել կարելի յե և պետք և սովորել մարքսիստորեն ճիշտ ըմբռնել պատմական զարգացման ընթացքը և կարողանալ պաշտպանել այդ ըմբռնումը թշնամական հարձակություններից և կեղծություններից: Այդ աշխատությունների մասին Լենինը 1921 թ. գրել ե, վոր դրանք պետք ե մանեն «կոմունիզմի պարտադրական դասազբուրերի սերիայի» մեջ:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԸՆԲՈՆՄԱՆ ՄԱՍԻՆ

I

(Essais sur la conception matérialiste de l'histoire, par Antonio Labriola professeur à l'université de Rome, avec une préface de G. Sorel. Paris 1897.)

Խոստովանում ենք՝ Հոռմի պրոֆեսորի այս գրքին մենք ձեռնամուխ յեղանք վոչ նվազ նախահամոզումով. մեկ վախեցրել էյին նրա վորոշ հայրենակիցների, որինակ՝ Ա. Լորիայի միքանի աշխատությունները (տես առանձնապես նրա «La teoria economica della costituzione politica»): Բայց գրքի հենց առաջին եղեցը մեկ համոզեցին, վոր մենք արդարացի չեյինք և վոր այլ բան և Ա.քիլի Լորիան, իսկ այլ՝ Անտոնիո Լաբրիոլան: Իսկ յերբ մենք մոտեցանք գրքի վերջին, ցանկություն զգացինք խոսել նրա մասին ուսւ ընթերցողի հետ: Հուսով ենք, վոր նա դրա համար չի արտնջա մեղանից: Զե՞ վոր՝

Так редки книги не пустые!

Լաբրիոլայի աշխատությունը առաջ լույս և տեսել իտալերեն: Ձրանակեն թարգմանությունը ծանր ե, իսկ տեղադրությունը անհաջող: Մենք այդ հավատացած ենք ասում, թեպետ ձեռքի տակ չունենք իտալական բնագիրը: Բայց իտալացի հեղինակը չի կարող պատասխանատու լինել Փրանսական թարգմանչի համար: Համենայն դեպք Լաբրիոլայի մաքերը հասկանալի յեն նաև Փրանսերեն ծանրակշիռ թարգմանության մեջ: Տեսնենք, ուրեմն, թե վորոնք են դրանք:

Գ. Կարեյեվը, վորն, ինչպես հայտնի յե, մեծագույն ջանապետությամբ կարդում և արտակարգ հաջողությամբ իւղաթյուն-

բում և յօւրաքանչյուր «աշխատություն», վոր թեկուղ վորեն կապ ունի պատմության մտաերիալիստական ըմբռնման հետ, հավանորեն մեր հեղինակին կերպարի «Տնտեսական մտաերիալզմբ» գերատեսչությանը: Այդ ճիշտ չի լինի: Լարբիոլան հաստատ ու բավականին հետևողականորեն հետեւմ և պատմության մատերիալիստական ըմբռնմանը, բայց «տնտեսական մտաերիալիստ» չի համարում իրեն: Նա կարծում է, թե նման անվանումն ավելի շուտ սազում ե հայտնի Թ. Ռոջերսի նման գրողներին, քան թե իրեն ու իր համախոհներին: Յեզ այդ ավելի քան ճիշտ ե, թեպես, առաջին հայացքից, գուցե և վոչ բոլորովին հասկանալի:

Հարցրեք վնր նարոդնիկին կամ սուբյեկտիվիստին ուղեք, թե ինչ բան ե տնտեսական մատերիալիստը: Նա կպատասխանի. դա մի այնպիսի մարդ է, վորը անտեսական ֆակտորին հաստարակական կյանքի մեջ գերիշող նշանակություն ե վերագրում: Տնտեսական մտաերիալզմն այսպես են հասկանում մեր նարոդնիկներն ու սուբյեկտիվիստները: Յեզ պետք ե խոստովանել վոր անկամակած գոյություն ունեն մարդիկ, վորոնք անտեսական «Փակտորին» գերիշող դեր են վերագրում մարդկային հաստարակությունների կյանքում: Պ. Միխայլովսկին մի անգամ չեմ միայն մատնանշել Լուի Բլանին, վորն այդ ֆակտորի գերիշուանության մասին բավականին առաջ ե խոսել, քան հայտնի ուռատակերտների հայտնի ուսուցիչը: Մենք մի բան չենք հասկանում. ինչու մեր հարգարժան սուբյեկտիվ սոցիոլոգը Լուի Բլանի վրա յե կանգ առել: Նա պարտավոր եր իմանալ, վոր մեզ հետաքրքրող կողմից լուի Բլանը շատ նախորդներ և ունեցել: Յեզ դիզոն, և՛ Միխյեն, և՛ Ոգյուղատեն Թյեռին, և՛ Տոկիվիլը տնտեսական «Փակտորի» գերակշող դերն ընդունել են՝ առնվազը՝ միջնադարյան և նոր ժամանակվա պատմության մեջ: Ուրեմն բոլոր այդ պատմագիրները տնտեսական մատերիալիստներ են յեղել: Մեր ուրերին հիշած Թ. Ռոջերսն իր «The economic interpretation of history» գրքում իրեն նույնպես համոզված տնտեսական մատերիալիստ ե ցուցադրել. նա ևս ընդունել է տնտեսական «Փակտորի» գերակշող նշանակությունը: Դրանից, իհարկե, գեռաւ չի հետևում, թե Թ. Ռոջերսի սոցիալ-քաղաքական հայացքները նույնական են յեղել որինակ, թեկուղ լուի Բլանի հայացք-ներին: Ռոջերսը կանգնած եր բոլորության մատեսական առաջարկական մատերիալիստ ե ցուցադրել.

տեսակետին, իսկ Լուի Բլանը մի ժամանակ ուտոպիական ուշ շիալիզմի ներկայացուցիչներից մեկն եր: Յեթե դուք Ռոջերսին հարցնելիք, թե նա ինչպես ե նայում բուրժուական տնտեսական կարգերին, նա կպատասխաներ, թե այդ կարգերի հիմքում մարդկային բնության արմատական հատկություններն են ընկած, և թե, այդ պատճառով, նրա ծագման պատմությունն առափնանական վերացումն ե այն խոչընդուների, վորոնք մի ժամանակ գժվարացնում եյին հիշած հատկությունների գրսերումը և նույնիսկ անհնարին գարձնում այն: Իսկ լուի Բլանը կհայտարարեր, վոր ինքը՝ կապիտալիզմը մեկն ե այն խոչընդուներից, վորոնց տգիտությունն ու բոնակալությունը կանգնեցրել են այնպիսի տնտեսակարգի ստեղծման ճամբին, վորը պետք է, վերջապես, իրոք, համապատասխանի մարդկային բնությանը: Այս, ինչպես անմասնում եք, շատ եյական տարածայնություն է: Ո՞վ կարող եր ճշմարտությանն ավելի մոտիկ լինել: Յեթե անկեղծորեն առենք, մենք կարծում ենք, թե այդ յերկու գրողներն ել զրեթե հավասարապես հեռու եյին նրանից, բայց մենք չենք ուզում և չենք ել կարող կանդ առնել այսեղ դրա վրա: Մեզ համար այժմ կարեռը բոլորովին այլ բան է: Ընթերցողին խնդրում ենք նկատել, վոր և՛ լուի Բլանի, և՛ Ռոջերսի համար հասարակական կյանքի մեջ զերիշխող տնտեսական ֆակտորն ինքը—ինչպես մաթեմատիկան ե արտահայտվում—մարդկային բնության, իսկ գլխավորապես մարդկային մտքի ու գիտելիքների ֆունկցիան եր: Նույնը պետք ե առել նաև ուստավրացիայի ժամանակների մասին: Դեռ, իսկ ինչպես անվանել այն մարդկանց պատմագիրների մասին: Դեռ, իսկ դիչպես անվանել այն մարդկանց պատմական հայացքները, վորոնք բետք և այդպիս են, վոր տնտեսական ֆակտորը գերիշուում ե հասարակական կյանքում, բայց միենույն ժամանակ համոզված են, վոր այդ ֆակտորը—այսինքան հասարակության եկոնոմիկան—իր հերթին արգասիք ե հանդիպումն մարդկային գիտելիքների ու համագործությունների: Այդպիսի հայացքներն անվանել այլ կերպ, քան իդեալիստական, չի կարելի: Դուրս ե գալիս, վոր տնտեսական մատերիալիզմը դեռևս չի ժիսում պատմական իդեալիզմը: Բայց այդ ևս գեռ բոլորովին ճշգրիտ չե. մենք առում ենք՝ զերս չի ժխտում իդեալիզը, իսկ պետք ե առել զուցե մինչև այժմ ել ավելի ուս նրա հա-

սարտակ տարածեսալին ե յեղել: Սրանից հետո հասկանալի յի, թէ
ինչու Անտոնիո Լաբրիոլայի նման մարդիկ իրենց տնտեսական
մատերիալիստներ չեն համարում. հենց երա համար, վոր երանք
նետեղական մատերիալիստներ են և հենց նրա համար, վոր պատ-
մականորեն նրանց հայացքները պատմական իդեալիզմի ուղղափառ-
հակադրությունն են հանդիսանում:

II

«Մակայն—թերեւ ասի մեղ պ. Կուլգրինը—դուք՝ շատ «աշա-
կելատների» հատուկ սովորությամբ՝ գիմում եք պարագործուների,
բառերի հետ եք խաղում, դարձնում եք հայացքներդ, որեր եք
կուլ տալիս: Ձեզ մոտ տնտեսական մատերիալիստներ իդեալիստ-
ները գուրա յեկան: Բայց այդ գեպքում ինչպես կհրամայեք հաս-
կանալ իսկական և հետեղական մատերիալիստներին: Միթե
նրանք չեն ընդունում տնտեսական ֆակտորի գերակշռության
միտքը: Միթե նրանք ընդունում են, վոր այդ ֆակտորին կից
ուրիշներն ել են զործում պատմության մեջ, և վոր մենք իդուր
կճգնեյինք պարզել, թե նրանցից վորն և մյուս բոլորի վրա գե-
րիշխում: Զի կարելի չուրախանալ իսկական ու հետեղական
մատերիալիստների փոխարեն, յեթե նրանք իրոք հակված չեն
տնտեսական ֆակտորն ամենուրեք խցկելուն»:

Մենք պ. Կուլգրինին կողատասխանենք, վոր իսկական ու
հետեղական մատերիալիստներն, իրոք, հակված չեն ամեն տեղ
խցկելու տնտեսական ֆակտորով: Յեվ հենց այն հարցը, թե
հասարակական կյանքի մեջ վոր ֆակտորն ե գերիշխում, նրանց
անհիմն հարց և թվում: Բայց պ. Կուլգրինը թող շշտապի ուրա-
խանալու: Իսկական ու հետեղական մատերիալիստները բնակ
պ. պ. նարոդնիկների ու սուրբեկտիվիստների ազգեցությամբ չե-
ն, վոր այդ համազմանն են յեկել: Իսկական ու հետեղական մա-
տերիալիստները ծիծաղել միայն կարող են այն առարկություն-
ների վրա, վոր այդ պարոններն են անում՝ տնտեսական ֆակ-
տորի գերիշխանության մտքի գեմ: Ըստորում պ. պ. նարոդ-
նիկներն ու սուրբեկտիվիստներն ուշացել են այդ առարկու-
թյուններն անելու: Այն հարցի անտեղիությունը, թե հասարա-
կական կյանքի մեջ վոր ֆակտորն ե գերիշխում, խիստ նկատե-
լի յե զարձել արգեն չեղելի ժամանակներից սկսած: Հեղեղան
իդեալիզմը նման հարցերի հնարավորությունն անդամ ժիտում

եր: Առավել ևս ժիտում ե այդ հնարավորությունը մեզ ժամա-
նակակից գիտելելատիկան մատերիալիզմը: Այն որպանից, յերբ
լույս տեսավ «Քննադատական քննադատության քննադատու-
թյունը», և առանձնապես «Հար Kritik der politischen Oekonomie» հայտնի գրքի լույս տեսնելուց հետո, այլ և այլ սոցիալ-պատ-
մական ֆակտորների հարաբերական նշանակության մասին վեճել
կարող ելին թեորիայի կողմից հետամնաց մարդիկ միայն: Մենք
գիտենք, վոր մեր խոսքերը զարմացնելու յեն վոչ միայն մենակ
պ. Կուլգրինին, ուստի և շապառում ենք բացարություն տալ:

Ի՞նչ բան են սոցիալ-պատմական ֆակտորները: Ի՞նչպես և
ծագում պատկերացումը նրանց մասին:

Վերցնենք մի որինակ: Դրաքի յեղբայրները ձգտում են
կասեցնելու հասարակական հողերը հոսմայեցի հարուսաների
կողմից գրավելու պրոցեսը, վոր Հոռմի համար կործանարար եր:
Հարուսաները զիմադրում են Գրաքներին: Պայքար և սկսվում:
Պայքարող կողմերից ամեն մեկը մոլեգնորեն հետապնդում ե իր
նպատակները: Յեթե յետ կամենայի նկարագրել այդ պայքարը,
յետ կարող ելի ներկայացնել այն՝ վորոնս մարդկային կրքերի
պայքարը: Այսպիսով կրքերը Հոռմի ներքին պատմության «Փակ-
տուրներ» կհանդիսանային: Բայց ինչպես իրենք, Գրաքները,
այնպես և նրանց հակառակորդները, պայքարելիս ոտքվում ելին
այն միջոցներից, վոր Հոռմի պետական իրավունքն եր տալիս
նրանց: Յետ, ինարկե, չեմ մոռանս այդ իմ պատմության մեջ և,
այդպիսով, հոռմեյական պետական իրավունքը նույնական կհան-
դիսանա Հոռմի հանրապետության ներքին զարգացման ֆակտորը:

Ապա, Գրաքների գեմ մաքառող մարդիկ նյութապես շա-
հագրգնակած ելին խորն արմատացած չարարկությունը ողաշո-
պանելով:

Գրաքներին պաշտպանող մարդիկ նյութապես շահագրգնա-
կած ելին նրա վերացմամբ: Յետ այդ հանգամանքը ևս կնշեմ,
վորի հետեւանքով նկարագրած սպայքարը նյութական շահերի
պայքար, դասակարգերի պայքար, աղքատների ու հարուսաների
պայքար կհանդիսանա: Հետեւապես, անս և արդեն յերրորդ ֆակ-
տորը, և այս անգամ ամենահետաքրքրականը՝ հաշակագր
տնտեսական ֆակտորը: Յեթե գուք ժամանակ ու ցանկություն
ունեք, ընթերցող, կարող եք յերկար-բարակ դատել այն ժա-

որն, թե Հառմի ներքին զարգացման ֆակտորներից վորն եր զերշխում մյուսների դրա, իմ պատմական պատմվածքի մեջ զուք բավականաչափ ավյալներ կդանեք՝ այդ մասին ամեն մի կարծիք պաշտպանելու համար:

Ինչ ինձ և վերաբերում—յես առայժմ գուրս չեմ գա հաստիկ պատմողի դերից. յես շատ չեմ տաքանա ֆակտորների առթիվ: Նրանց համեմատական նշանակությունն ինձ չի հետաքրքրում: Ինձ, վորպես պատմողի, մի բան և հարկավոր—ըստ հստավորության ճշգրիտ ու կենդանի պատկերել ավյալ գետքերը: Դրա համար յես պետք ե մի հայտնի, թեկուղ և արտաքին կապ սահմանեմ նրանց միջև և գասավորեմ նրանց վորոշ հեռանկարի մեջ: Յեթե յես հիշատակում եմ այն կրքերը, վոր հուզել ին ալայքարող կողմերին, կամ Հռոմի այն ժամանակա կառուցվածքը, կամ, վերջապես, նրա մեջ գոյություն ունեցած գույքային անհավասարությունը, ապա այդ անում եմ գեղքերի լոկ կապակցված ու կենդանի շարադրման շահերից յելնելով: Այդ նպատակին հասնելով՝ յես ինձ կատարելապես բավարարված կզամ՝ անսարքերորեն փիլիսոփաներին թողնելով լուծել, թե կրքերն են իշխում տնտեսության վրա, թե՞ տնտեսությունը՝ կրքերի վրա, թե, մերջապես, վոչինչ վոչնչի վրա չի իշխում, վորովհետև յուրաքանչյուր «ֆակտոր» գործում և ըստ վոռկե կառունի՝ ապրիք և թույլ տուր ուրիշներին ապրել:

Այս ամենը կիմնի այն դեպքում, յեթե յես գուրս չգամ հաստիկ պատմողի դերից, վորը հեռու յե «նենդավոր իմաստնարանության» վորեւ հակումից: Իսկ ինչ կիմնի, յեթե յես չսահմանափակվեմ այդ դերով, յեթե սկսեմ փիլիսոփայել նկարագրած գեղքերի արտաքին կապով միայն, այն ժամանակ յես կկամենամ ըացել նրանց ներքին պատճառները, և այն նույն ֆակտորները—մարդկային կրքերը, պետական իրավունքը, եկոնոմիկան—վոր յես առաջ ընդգծում ու առաջ եյի քաշում, զեկավարվելով գրեթե միմիայն գեղարվեստական բնագրով, իմ աչքում կըստանան մի նոր, վեթխարի նշանակություն: Նրանք ինձ կներկայանան վորպես հենց այն փնտավող ներքին պատճառները, հենց այն «Թագնված ուժերը», վորոնց աղդեցությամբ ել բացարկում են գեղքերը: Յես կատեղեմ ֆակտորների թեորիան:

Այդոինի թեորիայի այս կամ այն առատեսակը, իրոք, պետք ե ծագի ամենուրեք, վորտեղ հասարակական յերեւյթներով հետաքրքրվող մարդիկ նրանց հասարակ գիտումից ու նկարագրումից անցնում են նրանց միջև գոյություն ունեցող կտղի հետագոտությանը:

Բացի այդ ֆակտորների թեորիան աճում ե հասարակական գիտության մեջ աշխատանքի բաժանման աճման հետ: Այդ գիտության բոլոր ճյուղերը—եթիկան, քաղաքականությունը, իրավունքը, քաղաքանատեսությունը և այլն—միկնույն բանն են քննում—հասարակական մարդու գործունեյությունը: Բայց նրանցից յուրաքանչյուրն իր առանձնահատուկ տեսակետից և քննում այն: Պ. Միխայլովսկին կասեր, թե նրանցից ամեն մեկն առանձին «լար» և «վարում»: Յուրաքանչյուր «լար» կարող է դիտվել վորպես հասարակական զարգացման ֆակտոր: Յեվ, իրոք, մենք այժմ կարող ենք գրեթե նույնքան ֆակտորներ թվել վորքան առանձին-առանձին «գիսցիպլիններ» գոյություն ունեն հասարակական գիտության մեջ:

Ասածներից հետո, հուսով ենք, հասկանալի յե, թե ինչ բան են սոցիալ-պատմական ֆակտորները և ինչպես ե ծագում նրանց պատկերացումը:

Սոցիալ-պատմական ֆակտորը աբստրակցիա յե, նրա մասին պատկերացումը ծագում է վերացման (ՕՏՎԼԵЧЕНИЯ) (աբստրահվելու) ձանապարհով: Աբստրահվելու պրոցեսի շնորհիվ հասարակական ամբողջի տարբեր կողմերն ընդունում են մեկուսացած կատեգորիաների տեսք, իսկ հասարակական մարդու գործունեյության տարբեր դրսերումներն ու արտահայտությունները—մորալը, իրավունքը, անտեսական ձևերը և ալլու—մեր ուղեղի մեջ ձևափոխվում են հասուկ ուժերի, վորոնք, իբր թե, հանդիսանում են այդ գործունեյությունն առաջացնող ու պայմանագորդ նրա վերջին պատճառները:

Քանի վոր ֆակտորների թեորիան ծագել ե, անհրաժեշտութեան պետք և ծագեն վեճեր այն մասին, թե վոր ֆակտորը պետք և գերիշխող ձանաչել:

III

«Ֆակտորների» միջև գոյություն ունի փոխազդեցություն. նրանցից ամեն մեկն ազդում է մյուս բոլորի վրա և, իբ հերթին,

մյուս բոլորի ազգեցությունն և զգում իր վրա։ Դրա հետեւանքում առաջվում է փոխադարձ ազգեցությունների, ուղղակի դրծողությունների և անդրադարձ ներդրությունների մի այնպիսի խճանքած ցանց, վոր հասարակական զարդացման ընթացքն իրեն բացարելու նպատակադրած մարդու գլուխն սկսում է պառյա գալ, ու նա անհաղթելի կարիք է զգում գոնե վորես թել գտնել՝ այդ լարյուրին թուսից յենելու համար։ Վորովինետե գառը փորձը նրան համոզել է, վոր փոխազգեցության տեսակետը միայն վլիապատույտ և առաջացնում, ուստի նա մի այլ աետակետ և փնտառմ։ Նա աշխատում է պարզացնել իր խնդիրը։ Նա հարցնում է ինքն իրեն։ արդյոք սոցիալ-պատմական ֆակտորներից վորես մեկը չի հանդիսանում մյուս բոլորի ծագման առաջին հիմնական պատճառը։ Յեթե նրան հաջողվեր լուծել այս հիմնական հարցը դրական իմաստով, ապա նրա խնդիրը, իրոք, անհամեմատ ավելի պարզ կլիներ։ Դիցուք՝ նա համոզվեց, վոր յուրաքանչյուր տվյալ յերկրի բոլոր հասարակական հարաբերություններն, իրենց ծագման ու զարդացման ընթացքում, պայմանավորվում են նրա մտավոր զարդացման ընթացքով, վորն, իր կողմից, վորոշվում է մարդկային բնության հատկություններով (իգեալիստական տեսակետ)։ Այն ժամանակ նա հեշտությամբ գուրս և գալիս փոխազգեցության կախարդական շրջանից և օտեղծում և հասարակական զարդացման ավելի կամ պակաս բարեկազմ ու հետևողական թեորիա։ Հետագայում, առարկայի հետագա ուսումնասիրության շնորհիվ, նա կտեսնի, գուցի, վոր ինքը սխալվել է, վոր չի կարելի մարդկանց մտավոր զարդացումը ամբողջ հասարակական շրջանաւ առաջին պատճառը համարել։ Իր սխալը խոստավանելով՝ նա միենույն ժամանակ կնկատի, թերեւ, վոր նրա համար այնուամենայնիվ ոգտակար եր իր ժամանակավոր այն համոզմունքը, թե՛ մտավոր ֆակտորը գերիշխում և մասցայլ բոլորի վրա, վորովինետե առանց այդ համոզման նա չեր հեռանա փոխազգեցության մեռյալ կետից և մի քայլ անգամ չեր մերձենա հասարակական յերեսութներն ըմբռնելուն։

Հասարակական-պատմական զարդացման ֆակտորների միջև այս կամ այն հիերարխիան սահմանելու նման ձեր փորձերը դատապարելն անսարքարացի կլիներ։ Իր ժամանակին նրանք

նույնպես անհրաժեշտ ելին, ինչպես անխուսափելի յեր ֆակտորների թեորիայի՝ իրեն յերեան գալը։ Անտոնիո Լարրիոլան, վորը մյուս բոլոր մատերիալիստական գրողներից ավելի լրիվ ու ավելի լավ եր հասկացել այդ թեորիան, շատ ճիշտ առում է, թե՝ «պատմական ֆակտորներն իրենցից ներկայացնում են անչափ ավելի փոքր մի բան, քան զիտությունը, և անչափ ավելի մեծ, քան կոպիտ մոլորությունը»։ Ֆակտորների թեորիան իր բաժին ոգուածն է բերել զիտությանը։ «Պատմա-սոցիալական ֆակտորների հատուկ ուսումնասիրությունը ծառայել է, —ինչպես իրերի տեսանելի շարժումից այն կողմ չգնացող յուրաքանչյուր եմպիրիկ ուսումնասիրությունն է ծառայում, —մեր դիտողական գործիքների կատարելագործմանն ու հնարավորություն և տվել վերացման (օտելեցենիա) միջոցով արհեստականորեն մեկուսացված յերեսութների մեջ իսկ գտնել այն կապը, վորը նրանց միացնում է հասարակական ամրողջի հետ։ Մասնագիտական հասարակութան գիտություններին ծանոթ լինել ներկայումս անհրաժեշտ է յուրաքանչյուրին, ով ցանկություն կունենա մարդկության անցյալ կյանքի վորես մասը վերականգնելու։ Պատմական գիտությունն առանց ֆիլոզոփիայի՝ հետու չեր գնա։ Խոկ արդյոք գիտությանը քիչ ծառայություն են մատուցել միակողմանի սոմանիստները, վորոնք հոգմեյական իրավունքը գրած բանականություն եյին համարում։

Բայց վորքան ել որինավոր ու ոգտակար լիներ իր ժամանակին ֆակտորների թեորիան, այժմ քննադատության չի դիմանում։ Նա հասարակական մարդու գործունեյությունն անդամատում ե՝ նրա տարրեր կողմերն ու զրաւորումները հատուկ ուժերի վերածելով, վորոնք իրենց վերենցով վորոշում են հասարակության պատմական շարժումը։ Հասարակական գիտության զարգացման պատմության մեջ այդ թեորիան նույնպիսի գեր և խաղացել ինչպիսին առանձին ֆիզիկական ուժերի թեորիան բնագիտության մեջ։ Բնագիտության սվաճումները բերին այդ ուժերի միասնության ուսմունքին, եներգիայի ժամանակակից ուսմունքին։ Ճիշտ այդպիս ել հասարակական գիտության նվաճումները ֆակտորների թեորիան՝ հասարակական վերլուծության այդ պատուղը՝ պետք է փոխարինեյին սինթետիկ հայացքով հասարակական կյանքի նկատմամբ։



Սինթետիկ հայացքը հասարակական կյանքի նկատմամբ մեր ժամանակակից դիմակելու կական մատերիալիզմի առանձնահատկությունը չի կազմում: Այն մենք գտնում ենք արդեն չեղելի մոտ, վորի համար խնդիրը կայանում եր ամբողջ հասարակական-պատմական սլրոցեսն իր ամբողջական առումով զիտականորեն բացատրելու մեջ, այսինքն՝ ի միջի այլոց հասարակական մարդու գործունեյության այն բոլոր կողմերով ու դըրակառումներով, վորոնք արատրակա մտածողության տեր մարդկանց ներկայանում եյին առանձին ֆակտորների կերպարանքով: Բայց չեղելն իր «աբսոլուտ իդեալիստի» վորակով՝ հասարական մարդու գործունեյությունը բացատրում եր համաշխարհային վագու հատկություններով: Քանի վոր տրված են այդ հատկությունները—«ան սիհ» տրված և մարդկության ամբողջ պատմությունը, տրված են նաև նրա վախճանական հետևանքները: Չեղելի սինթետիկ հայացքը միևնույն ժամանակ տեսլես ոգիական հայացք եր: Նորագույն դիմակելու կական մատերիալիզմը հասարակական գիտությունից վերջնականապես հեռացրեց տելեռութիւն:

Նա ցույց տվեց, վոր մարդիկ իրենց պատմությունը ընտանի համար չեն կերտում, վորպեսզի ընթանան պրոգրեսի նախորդ գծված ուղղով, և վոչ ել նրա համար, վոր պարտավոր են յենթարկվել մի ինչ-վոր վերացական (ըստ Լաբրիոլայի արտահայտության՝ մետափիզիկ) եվոլուցիայի որենքներին: Նրանք այն կերտում են՝ իրենց կարիքները բավարարել ձգուելով, և զիտությունը պետք է մեզ բացատրի, թե այդ կարիքների բավարարման տարբեր յեղանակներն ինչպես են աղբում մարդկանց հասարակական հարաբերությունների և նրանց հոգեկան գործունեյության վրա:

Հասարակական մարդու կարիքների բավարարման յեղանակները, և նշանավոր չափով հենց այդ կարիքներն եւ վորոշվում են այն գործիքների հատկություններով, վորոնց ոգնությամբ նա ավելի կամ պակաս չափով իրեն և յենթարկում ընությունը. այլ կերպ ասած՝ նրանք վորոշվում են նրա արտադրողական ուժերի վիճակով: Այդ ուժերի վիճակի յուրաքանչյուր նշանակելի փոփոխությունն անզրադառնում և նույնպես մարդկանց հասարակական հարաբերությունների վրա, այսինքն՝

ի միջի այլոց նաև նրանց տնտեսական հարաբերությունների վրա: Բոլոր տեսակի և տարատեսակի իդեալիստների համար տնտեսական հարաբերությունները մարդկային բնության գունկցիան են յեղեւ մատերիալիստ-դիմակելութիւններն այդ հարաբերությունները հասարակական արտադրողական ուժերի գունկցիան են համարում:

Սյատեղից հետեւում ե, վոր յեթե մատերիալիստ-դիմակելութիւնները թույլատրելի համարելին խոսել հասարակական զարգացման ֆակտորների մասին այլ կերպ, քան այդ հնացած ֆիկցիաները քննադատելու նպատակով, ապա նրանք ամենից առաջ պետք ե նկատել տային այսպես կոչված տնտեսական մատերիալիստներին նրանց «գերիշխող» ֆակտորի փօփոխականությանը. նորագույն մատերիալիստները չգիտեն մի այնպիսի տնտեսական կարգ, վորը մենակ ինքը համապատասխաներ մարդկային բնությանը, մինչդեռ տնտեսական հասարակական կառուցվածքի մյուս բոլոր ձևերը հետևանք հանդիսանային նրա (մարդկային բնության: Հայ. Խմբ.) վրա գործ զրած ավելի կամ պակաս բռնության: Նորագույն մատերիալիստների ուսմունքի համաձայն՝ մարդկային բնությանը համապատասխանում ե ամեն մի տնտեսական կարգ, վորը համապատասխանում է արտադրողական ուժերի տվյալ ժամանակվա վիճակին: Յեվընդհակառակը, յուրաքանչյուր տնտեսական կարգ սկսում է հակասել այդ բնության պահանջներին, հենց վոր հակասության և զայլա արտադրողական ուժերի վիճակի հետ: «Դերիշխող» ֆակտորն ինքն, այսպիսով, յենթարկված ե հանդիսանում մի այլ «ֆակտորի»: Ապա զրանից հետո այդ ինչ «գերիշխող» ֆակտոր եւ:

Յեթե այդ ամենն այդպես ե, ուրեմն պարզ ե, վոր մի ամբողջ անդունդ կա մատերիալիստ-դիմակելութիւնների և այն մարդկանց միջև, վորոնց վոչ առանց հիմքի կարելի յեր տնտեսական մատերիալիստներ անվանել: Իսկ ինչ ուղղության և պատկանում այն վոչ բոլորովին հաճելի ուղղության անդուր աշակերտները, վորոնց դեմ դեռևս մոտիկ անցյալում անշափի կրքոտ, թեկուզ վոչ անչափ յերջանիկորեն հանգես յեկան պ. պ. կարեյիվը, ն. Միխայլովսկին, Ս. Կրիվենկոն և այլ ուժերի խելափ ու գիտուն մարդկիկ: Յեթե չենք սխալպում, «աշակերտներն» ամբողջովին կանգնած եյին դիմակելութիւնների վրա, այսինքն՝

անսակետի վրա: Իսկ ինչու պ.պ. Կարեյեվը, Ն. Միխայլովսկին,
և Ս. Կրիվենկոն և այլ խելոք ու գիտուն մարդիկ նրանց վերա-
դրում եյին տնտեսական մատերիալիստների հայացքներն ու ջար-
դում նրանց հենց այն պատճառով, վոր նրանք իբր թե տնտե-
սական ֆակտորին չափաղանցրած նշանակություն եյին վերա-
դրում: Կարելի յե յենթադրել, թե խելոք ու գիտուն մարդիկ այդ այն
պատճառով եյին անում, վորովհետև յերջանկահիշատակ տնտեսա-
կան մատերիալիստների փաստարկումներն ավելի դյուրին և հերքել,
քան թե մատերիալիստ-դիալեկտիկների փաստարկումները: Իսկ
կարելի յե յենթադրել նաև այն, վոր աշակերտների ներզիտուն
հակառակորդները վատ են յուրացրել նրանց հայացքները: Այս
յենթադրությունը նույնիսկ ավելի հավանական է:

Մեղ կառարկեն, թերեւս, թե «աշակերտներն» իրենք յեր-
բեմ տնտեսական մատերիալիստներ են անվանել իրենց, և թե
«տնտեսական մատերիալիզմ» անունն առաջին անգամ գործ է
ածել Փրանսացի «աշակերտներց» մեկը: Այդ այդպես եւ: Բայց
վոչ Փրանսացի և վոչ ուսւա աշակերտները յերբեք «տնտեսական
մատերիալիզմ» բառերի հետ չեն կապել այն պատկերացումը,
վոր կապում են նրա հետ մեր նարոդնիկներն ու սուրյեկտիվիստ-
ները: Բավական ե հիշեցնել այն հանդամանքը, վոր, Ն. Միխայ-
լովսկու կարծիքով, Լուի Բլանն ու պ. Յու. Ժուկովսկին նույն-
պիսի «տնտեսական մատերիալիստներ» են յեղել, ինչպես պատ-
մության վրա մատերիալիստական հայացք ունենալու մեր արդի
կողմանակիցները: Հասկացողությունների շփոթումը սրանից դեմն
անցնել չի կարող:

IV

Հասարակական գիտությունից ամեն տեսակի տելեղոգիան
գուրս հանելով և հասարակական մարդու գործունեյությունը
նրա կարիքներով, նրանց բավարարման՝ տվյալ պահին գոյու-
թյուն ունեցող միջոցներով ու յեղանակներով բացատրելով
գիտականական մատերիալիզմն*) առաջին անգամն և հիշյալ
գիտությանը տալիս այն «խստությունը», վորով նրա հանդեպ

*) Լարբիուան նրան առաջի և նեգելսից փոխ առած պատմական մատերիա-
լիզմ անունը:

հաճախ գոռողանում եր նրա քույրը՝ գիտությունը բնության
մասին: Կարելի յե ասել, թե հասարակական գիտությունը ինքը
դառնում է բնական գիտություն: «notre doctrine naturaliste
d'histoire», արդարացիորեն ասում է Լարբիուան: Բայց այդ բնակ
չի նշանակում, թե նրա համար բիոլոգիայի բնագավառը ձուլ-
վում է հասարակական գիտության բնագավառի հետ: Լարբիու-
ան ջերմ հակառակորդն է «Ժաղաքական դարվի-
նիզմի», վորը վաղուց ի վեր «համաձարակի պես վարակել և շատ
մտածողների, հատկապես սոցիոլոգիայի փաստաբանների ու ար-
տասանողների մտքերը» և, վորպես մողային սովորություն, աղ-
դել և նույնիսկ քաղաքական պրակտիկների լեզվի վրա:

Մարդն, անկասկած, կենդանի յե, վոր մյուս կենդանիների
հետ ազգակցական կապերով և կապված: Նա բնակ արտոնյալ
հյակ չե ըստ իր ծագման: Նրա որգանիզմի Փիզիոլոգիայի մասնակի գեպքը:
Սկզբնապես նա՝ մյուս կենդանիների նման՝ ամբողջովին յենթարկ-
վում եր իրեն շրջապատղ բնական միջավայրին, վորն այն
ժամանակ գեռ իր վրա չեր զգացել նրա կերպարանափոխիչ
ներդորդությունը: Նա հարկադրված եր հարմարվել այդ միջա-
վայրին, պայցքարելով իր գոյության համար: Հատ Լարբիուայի
կարծիքի՝ բնական միջավայրին այդպես անմիջապես նույնականացները, ինչ չափով
նրանք իրարից փիզիկական նշաններով են տարրերվում, որինակ՝
սպիտակ, դեղին, ու սասաներ,—և վոչ թե պատմա-սոցիալական
յերկրորդային փորմացիաներ հանդիսանում, այսինքն՝ ազգեր
ու ժողովուրդները: Վորպես գոյության կովում բնական միջավայ-
րին հարմարվելու նման հետևանք ծագել են հասարակայնության
նախնական բնագդներն ու սեռական ընտրության սազմերը:

Բայց մենք կուհել միայն կարող ենք, թե ինչպիսին եր
«նախնադարյան մարդը»: Ներկայում յերկիրը բոնող մարդիկ,
հավասարապես նաև նրանք, վորոնց առաջներում դիտել են վրա-
տահության արժանի հետազողները, արդեն բավականին հե-
ռացած են հանդիսանում այն մոմենտից, յերբ մարդկության
համար ընդհատվել է կենդանական կյանքը՝ այս բառի խևական
իմաստով: Այսպես, որինակ, իրոկեպները—Մորգանի ուսումնա-
ռիրած ու նկարագրած—իրենց gens materna-յուլ համեմատաբար

արդին շատ հեռու յեն գնացել հաստակական զարգացման ուղիով։ Նույնիսկ մեր ժամանակակից ավարալիացիները վոչ միայն ունեն լեզու—վորը կարելի յե անվանել հասարակայնության պայման ու գործիք, պատճառ ու հետևանք—և վոչ միայն ծանոթ են կրակի գործածությանը, այլ ապրում են վորոշ կարգեր, վորոշ սովորություններ և հիմնարկներ ունեցող հասարակություններով։ Ավարալիական ցեղն ունի իր տերիտորիան, իր վորոշական ձևերը. նա ունի պաշտպանության և հարձակման վորոշ գործիքներ, վորոշ կարասի մթերքների պաշար պահելու, վորոշ յեղանակներ՝ մարմինը զարգարելու, մի խոսքով՝ ավտորալիացին արդեն ապրում ե մի հայտնի, ճշշտ ե, շատ տարբական արմատական միջավայրում, վորին և նա հարմարվում ե ամենավայր մանկությունից սկսած։ Այս արհետական, — հասարակական, — միջավայրը ամեն մի հետազա պատճիմության անհրաժեշտ սույնամանն ե: Նրա զարգացման առաջնանով և չափում ամեն մի այլ ցեղի վայրենության կամ բարբարոսության աստիճանը։

Հասարակական այս մկրնական փորմացիան համապատասխանում ե մարդկության այսպիս կրչված նախապատմական կենցաղին։ Պատմական կյանքի սկիզբը յենթագրել ե տալիս արհետական միջավայրի ել ավելի զարգացում և մարդու ավելի մեծ իշխանություն բնության վրա։ Պատմական զարգացման ուղին յելող հասարակությունների ներքին բարդ հարաբերությունները, խելապես, բնավ բնական միջավայրի անմիջական ազգեացությամբ չեն պայմանավորվում։ Նրանք յենթագրել են տալիս աշխատանքի վորոշ գործիքների հայտնագործում, վորոշ մետաղներ արդյունահանելու կարողություն և այլն։ Արտագրության այս միջոցներն ու յեղանակները տարբեր պայմանների մեջ խիստ տարբեր կերպով են փոխվել. նրանցում դիտել կարելի յեր պրոգրես, կանգառումն կամ նույնիսկ ռեգրես, բայց յերբեք այդ փոփոխությունները ժարդարանց չեն վերադարձել զուտ կենդանական կյանքի, այսինքն՝ մի կյանքի, վորը բնական միջավայրի անմիջական ազգեցության ներքո լինի։

«Պատմական գիտության առաջին և գլխավոր խնդիրն այդ արհետական միջավայրի՝ նրա ծագման և կերպարանափակությունների վորոշումն ու հետազոտմն ե: Ասել, թէ այդ միջության ներքո լինի։

Վայրը կազմում ե բնության մի մասը, նշանակում ե արտահայտել մի միտք, վորը վոչ մի վորոշակի նշանակություն չունի, շնորհիվ հենց իր չափազանց ընդհանուր ու վերացական բնաւորության» *)։

Վոչ պակաս բացասորեն, քան վելի «քաղաքական ու սոցիալական զարվինիզմը», կարիսլան վերաբերվում ե նաև «սիրահամբույր գիլետանաներից» վոմանց այն ջանքերին, վորոնց նպատակն ե պատմության մատերիալիստական ըմբռնումը միացնել եվոլուցիայի ընդհանուր թերթիայի հետ, վորը, նրա հատու, բայց ճիշտ զիտողության համաձայն, շատերը գարձրել են հասարակ մետաֆիզիկական մետաֆոր։ Նա ծիծաղում ե նաև այդ «սիրահամբույր գիլետանաների» պարզամիտ սիրալիբության վրա, վորոնք աշխատում են պատմության մատերիալիստական ըմբռնումը գնել Ողյուսա Կոնտի կամ Սպենսերի փիլիսոփայության հովանավորության ներքո։ «այդ նշանակում ե մեզ գաշնակիցներ ներկայացնել մեր ամենավճռական հակառակորդներն», ասում ե նա։

Դիլետանաների մասին արված նկատողությունն ակներեւորեն վերաբերում ե, ի միջի այլոց, պրոֆեսոր Ենրիկօ Ֆերրիին, — «Սպենսեր, Դարվին և Մարքս» խիստ մակերեսային աշխատության հեղինակին, վոր լույս ե տեսել քրանսերեն թարգմանությամբ «Socialisme et science positive» վերնագրով։

V

Յեվ այսպես, մարդիկ իրենց պատմությունը կերտում են՝ իրենց կարիքները բավարարելու ձգտելով։ Այդ կարիքներն ոկզինապես տրվում են, ինարկե, բնության կողմից, բայց այսուհետեւ բավականին փոխվում են՝ քանակի ու վորակի կողմից՝ արհետական միջավայրի հատկությունների շնորհիվ։ Մարդկանց տրամադրության տակ գտնվող արտադրողական ուժերն իրենցով պայմանավորում են նրանց բոլոր հասարակական հարաբերությունները։ Արտադրողական ուժերի վիճակով ամենից առաջ վորոշվում են այն հարաբերությունները, վորոնց մեջ իրար հանգել մարդիկ մտնում են արտադրության հասարակական պրոցեսում, այն ե՝ տնտեսական նարաբերությունները։ Այդ հարաբեր

*) Essais, p. 144.

բությունները բնականաբար ստեղծում են վորոշ շահեր, վորոնք իրենց արտահայտությունն են գտնում իրավանքի մեջ: «Իրավական յուրաքանչյուր նորմա վորոշ շահ և պաշտպանում», — ասում ե լաբրիոլան: Արտադրողական ուժերի զարգացումն ստեղծում ե հասարակության բաժանումը դասակարգերի, վորոնց շահերը վոչ միայն տարբեր են, այլ և շատ—և այն ել եյական—կողմերից արամագծորեն հակադիր են: Շահերի այդ հակադրությունն առաջ ե բերում հասարակական դասակարգերի թշնամական ընդհարումներ, նրանց պայքարը: Պայքարը հասցնում ե այն բանին, վոր տիմային կազմակերպությունը փոխարինվում ե պիտօնականութ, վորի խնդիրը գերիշխող շահերի պաշտպանությունն ե համարժում: Վերջապես, արտադրողական ուժերի տվյալ վիճակով պայմանավորվող հասարակական հարաբերությունների հողի վրա աճում և սովորական բարոյականությանը, այսինքն՝ այն բարոյականությունը, վոր զեկավարում ե մարդկանց՝ որանց սովորական կենցաղական պրակտիկայի մեջ:

Այսպիսով յուրաքանչյուր տվյալ ժողովրդի իրավունքը, պետական կառուցվածքը և բարոյականությունը անմիջականութեն և ուղղակի պայմանավորվում են նրան հատուկ անտեսական հարաբերություններով: Այդ նույն հարաբերություններով ել պայմանավորվում են,—բայց արդեն անուղղակի ու մրջնորդապես,—մտքի ու յերևակայության բոլոր ստեղծվածքները—արվեստը, գիտությունը և այլն:

Տվյալ յերկրի գիտական մտքի պատմությունը կամ արվեստի պատմությունը հասկանալու համար բավական չե նրա տնտեսությունն իմանալը: Գետք և կարողանալ տնտեսությունից հասարակական հոգեբանության անցնել առանց վորի ուշադիր ուսումնասիրության և ըմբռնման անկարելի յե իդեոլոգիաների պատմության մատերիալիստական բացատրությունը: Այդ ինարկի, չի նշանակում, թե գոյություն ունի մի ինչ-վոր հասարակական հոգի, կամ ինչ-վոր ժողովրդական կոլեկտիվ «վորի», վոր զարգանում ե իր առանձնահատուկ որենքներով և արտահայտվում հասարակական կյանքի մեջ: «Այս զարյուն միտիցիզմ ե», ասում ե լաբրիոլան: Մատերիալիստի համար ներկա գեղագում խոսք կարող ե լինել տվյալ յերկրի և տվյալ ժամանակի ավյալ հասարակական դասակարգի մեջ զգացմունքների ու

մտքերի գերակշռող արամագրության մասին: Զգացմունքների ու մտքերի այդպիսի արամագրությունը հասարակական հարաբերությունների արդյունք և հանդիսանում: Լաբրիոլան հաստատ համոզված ե, վոր վոչ թե մարդկանց գիտակցության ձևերն են վորոշում նրանց հասարակական կեցության ձևերով են վորոշում նրանց գիտակցության ձևերը: Բայց հասարակական կեցության հողի վրա ծագելով, նրանց գիտակցության ձևերը կազմում են պատմության մի մասը: Պատմական գիտությունը չի կարող սահմանափակվել հասարակության անատոմիայով միայն. նա նկատի ունի յերևոյթների ամբողջ գումարը, վորոնք ուղղակի կամ անուղղակի կերպով պայմանավորված են հասարակական տնտեսությամբ, ներառյալ մինչև իսկ յերևակայության զործունեյությունը: Պատմական մի հատիկ փաստ անդամ չկա, վորն իր ծագումով պարտական չինչի հասարակական տնտեսությանը, բայց նվազ ճիշտ չե նաև այն, վոր պատմական մի հատիկ փաստ անդամ չկա, վորին նախորդած չինչի, վորին ուղեկցելիս չինչի և վորին հետեւիս չինչի գիտակցության մի վորոշ վիճակ: Այսպիսից ել բղում և հասարակական հոգեբանության վիթխարի նշանակությունը: Յեթե այն անհրաժեշտ և հաշվի առնել արդեն իրավունքի և քաղաքական հիմնարկների պատմության մեջ, ապա առանց նրան քայլ անգամ չի կարելի առնել զրականության, արվեստի, գիլխոսության և այլնի պատմության մեջ:

Յերբ մենք ասում ենք, թե տվյալ յերկը միանգամայն հարաբատ ե, որինակ, վերածության գարաջրանի վորուն, ապա այդ նշանակում ե, վոր նա կատարելապես համապատասխանում ե այն զասակարգերի այդ պահին գերակշռող արամագրությանը, վորոնք տուն եյին տալիս հասարակական կյանքին: Քանի հասարակական հարաբերությունները չեն փոխվել հասարակության հոգեբանությունը ևս չի փոխվաւմ: Մարդիկ ընտելանում են տվյալ հավատալիքներին, տվյալ հասկացողություններին, մտքի տվյալ ձեերին, տվյալ եսթետիկ պահանջների բավարարման տվյալ յեղանակներին: Բայց յեթե արտազրողական ուժերի զարգացումը հասցնում է հասարակական տնտեսական կառուցվածքի, իսկ զրա հետեւանքով նաև հասարակական դասակարգերի գիտակարգ հարաբերությունների քիչ թե շատ եյական փոփա-

խությունների, ապա վոլովում և նաև այդ գասակարգերի հոգեբանությունը, իսկ նրա հետ նաև «ժամանակի վոգին» և «Ժողովրդի բնափորությունը»: Այդ վոփոխությունն արտահայտվում է նոր կրօնական հավատալիքներ կամ նոր փիլիսոփայական հառկացողություններ, արվեստի նոր ուղղություններ կամ նոր եռթեարիկ կարիքներ առաջ գալով:

Լաբրիոլայի կարծիքով, հարկավոր և նկատի ունենալ նաև այն, վոր իգելովզիաների մեջ հաճախ շատ մեծ գեր են խաղում հասկացողությունների և ուղղությունների ապրաւմները, վորոնք ժառանգվում են նախորդներից և պահպանվում են սուկ ավանդաբար: Բայց այդ՝ իգելովզիաներում արտահայտվում են նաև բնության ազդեցությունը:

Արհեստական միջավայրն, ինչպես մենք արդեն գիտենք, խիստ ուժեղ կերպով կերպարանափոխում և բնության ազդեցությունը հասարակական մարդու վրա: Անմիջական ազդեցությունից նա դառնում է միջնորդական: Բայց նա չի գալարում գոյություն ունենալուց: Յուրաքանչյուր ժողովրդի տեմպերամենտի մեջ պահպանվում են բնական միջավայրի ազդեցությամբ ստեղծված վորոշ առանձնահատկություններ, վորոնք վորոշ չափով կերպարանափոխում են, բայց յերբեք լիովին չեն վոչնչանում հասարակական միջավայրին հարմարվելուց: Ժողովրդական տեմպերամենտի այդ առանձնահատկությունները կազմում են այն, ինչ անվանվում է ռատա: Ռասան անկագլածելի ազդեցություն և թողնում իգելովզիաներից միքանիսի, որինակ, արվեստի պատմության վրա: Յեկ այս հանգամանքն առավել ևս զըմքարացնում են նրա առանց այն ել վոչնչյուրին գիտական բացարությունը:

VI

Մենք բավականին մանրամասն և, հուսով ենք, ճշգրտորեն, շարադրեցինք Լաբրիոլայի այն հայացքները, թե հասարակական յերևոյթները կախված են հասարակության տնտեսական կառուցվածքից, վորոն իր հերթին պայմանավորվում ենրա արտադրողական ուժերի վիճակով: Մեծ մասամբ մենք կատարելապես համաձայն ենք նրա հետ: Բայց տեղտեղ նրա հայացքները մեր մեջ վորոշ կասկածներ են առաջացնում, վորոնց առթիվ մենք միքանի գիտողություններ ենք ուղում առաջ:

Ամենից առաջ ահա թե ինչ մատնանշենք: Լաբրիոլայի աշածի համաձայն՝ պետությունը հանդիսանում է մի հասարակական գասակարգի՝ մյուսի կամ մյուսների վրա գերիշխելու կաղմակերպությունը: Այդ այդպես եւ Բայց այդ հազիվ թե արտահայտելիս լինի ամբողջ ձշմարտությունը: Այնպիսի պետություններում, ինչպես Չինաստանը՝ կամ հին Յեղիպտոսն եւ, վորտեղ քաղաքակերթ կյանքն անհնարին եր՝ առանց մեծ գետերի հոսանքն ու հորդումները կանոնավորելու և վորողում կաղմակերպելու խիստ բարդ ու ծավալուն աշխատանքի, պետության ժապաւմը բավական նշանակալից չափով բացատրվել կարող և հագումը բավական ապահովագրողական պրոցեսի կարիքների անմիջական աղեցությամբ: Անկասկած, այնտեղ անհավասարությունը այս կամ գեցությամբ: Այսպիսի պահապահում եյինք այն չափով արդեն գոյություն ունեն նախապատմական ժամանակներում, ինչպես այն ցեղերի ներսում, վորոնք մտել եյին պետության կազմի մեջ,—և հաճախ միանգամայն տարբեր եյին իշտության կազմի մեջ,—և հաճախ միանգամայն տարբեր ելում, այնպես ել ցեղերի միջև: Բայց բենց ներսով գաղաքական ծագումով, այնպես ել ցեղերի միջև: Բայց այն իշտուղ դասակարգերը, վորոնց մենք հանդիպում եյինք այդ յերկների պատմության մեջ, իրենց ավելի կամ պակաս բարձր կազմության գիրքը զրավել եյին ենց շնորհիվ պետական կազմակերպության, վոր կյանքի յեր կոչվել հասարակա-արտա-կազմակերպության, վոր կյանքի յեր կոչվել հասարակա-արտա-կազմակերպության, վոր կյանքի լինի տարագրողական գումարի վրա գերիշխանությունը կուսել վոր յեղիպտական գաման իր գերիշխանությունը պարտական ե յեղել այն ահազին նշանակությանը, վոր ունեյին սուրանց սաղմային գիտական տեղեկությունները յեղիպտական հունական գիտական գիտական գաման իր գերիշխանությունը ամբողջ սիստեմի համար *): Արևմուտքում, —վոր ըրին, հառկանալի յե, պետք ե վերագրել նաև Հունաստանը, —մենք չենք նկատում արտադրության հասարակական պրոցեսի, —վորն այստեղ քիչ թե շատ լայնարձակ հասարակական կազմակերպություն չի յենթագրում, —անմիջական կարիքների ազդեցությունը պետության ժապաւմը վրա: Բայց այնտեղ ևս այդ ծագումը

*) Խալդական թագավորներից մեկն ասում եր իր մասին. «Յես ուսումնասիրեցի գետերի գաղտնիքները մարդկանց բարորության համար... յես գետի ջուրը տարա անապատները, նրանով յես լցը չորսցած փոսերը... յես գոռզեցի ամայի հարթավայրերը, յես նրանց տառառություն ու բերբիւթյուն ամի: Յես զրանք պարձրի յերշանկության բնակավայրը: Այստեղ ճշուած բենց, թեպետ և ինքնադովության հասարակական պրոցեսի կազմակերպման մեջ: Պետք արտադրության հասարակական պրոցեսի կազմակերպման մեջ:

պետք ե զգալի չափով վերադրել աշխատանքի հասարակական բաժնման անհրաժեշտության հաշվին, վորը կյանքի յեր կոչված հասարակական արտադրողական ուժերի զարգացմամբ։ Այդ հանգամանքը, իհարկե, չեր խանգարում պետությանը՝ միաժամանակ լինել քիչ թե շատ ստրկացված միջամասնության վրա արտոնյալ փոքրամասնության ունեցած իշխանության կազմակերպություն *): Բայց նրան վոչ մի գեղքում չպետք ե ուշադրությունից թողնել՝ խուսափելու համար պետության պատմական գերի մասին սխալ և միակողմանի հասկացողությունից։

Իսկ այժմ անցնենք իդեոլոգիաների պատմական զարգացման մասին լաբրիոլայի ունեցած հայացքներին։ Մենք տեսանք, վոր, նրա կարծիքով, այդ գարգացումը բարդանում է ռասային առանձնահատկությունների գործողությամբ և ընդհանրապես այն աղդցությամբ, վոր մարդկանց շրջապատող ընական միջավայրը գործում է նրանց վրա։ Խիստ ցավալի յե, վոր մեր հեղինակը հարկավոր չի համարել այս կարծիքը հաստատել ու բացատրել վորմեն որինակով։ մենք ավելի հեշտ կհասկանացինք այն։ Համեմայն դեպք անկառկած ե, վոր այդ կարծիքը չի կարող ընդունելի այն ձևով, ինչ ձևով նա արտահայտված ե։

Ամերիկայի կարմրամորթ ցեղերն, իհարկե, չեն պատկանում այն միենույն ռասային, վորին պատկանում եյին հունական արշիպելագում կամ Բալտիկ ծովի ափերին նախապատմական ժամանակները ընակված ցեղերը։ Անկասկածելի յե, վոր այդ տեղերից ամեն մեկում նախնադարյան մարդն զգացել է քնական միջավայրի խիստ յուրահատուկ ազդեցությունները։ Կարելի յեր սպասել, վոր այդ ազդեցությունների տարբերությունը անդրադառնար հիշած տեղերի նախնական ընակիչների սաղմային արշեստի արտադրությունների վրա։ Սակայն մենք չենք նկատում, Յերկրագնդի բոլոր մասերում՝ վորքան ել տարբերվեն նրանք իրարից, նախնադարյան մարդու զարգացման միատեսակ ոտագիտաներին համապատասխանում են արվեստի զարգացման միատեսակ աստիճանները։ Մենք գիտենք քարե դարի արվեստ,

*) Ինչպես նա նրան չի խանգարում վորոց վեպերում լինել նաև մի ժողովրդի յուսից նվաճվելու արգասիքը։ Բանության գերը շատ մեծ է, յերբ մորոշ հիմնարկներ փոխարինվում են այլ հիմնարկներով։ Բայց ինչպես նման փոխարինման հարավորությունը, այսպես ել նրա հասարակական հետևանքները բանությամբ ընալ չեն բացատրվում։

յերկաթե դարի արվեստ։ մենք չկիտենք տարբեր ռասաների՝ սպիտակի, կարմրի, գեղինի և այլնի արվեստը։ Արտադրողական ուժերի վիճակն անդրադառնում է նույնիսկ մանրամասնություններում։ Սկզբում մենք, որինակ, կավագրծության շնչագածքների մեջ տեսնում ենք միայն ուղիղ և կոտրտված զծեր, քառանկյուններ, խաչեր, գիգագներ և այլն։ Զարդարանքների այս տեսակը նախնական արվեստը փոխ ե առնում ավելի և նախնական արհեստներից—չուլհակությունից և հյուսվածագործությունից։ Բրոնզե դարում՝ մետաղների մշակման հետ մեկտեղ մետաղներ, վորոնք ընդունակ եյին մշակվելիս ընդունել յերկրաշափական ամենատեսակ ձևեր, յերեան են գալիս կորպագիծ զարդարանքները։ Վերջապես, անասունների ընտելացման հետ յերեան են գալիս նրանց ֆիգուրաները և ամենից առաջ ձիու Փիգուրան *):

Ճիշտ ե, մարդու պատկերը նկարելիս արդեն անպայման պետք ե արտահայտվի ռասայի հատկանիշների աղղեցությունը «գեղեցկության իդեալների» վրա, վորոնք հատուկ են նախնական արվեստագիտներին։ Հայտնի յե, վոր յուրաքանչյուր ռասա, նամանավանդ հասարակական զարգացման առաջին աստիճաններին, իրեն գեղեցկագույնն է համարում և խիստ բարձր և գնահատում հենց այն հատկանիշները, վորոնք նրան տարբերում են մյուս ցեղերից **)։ Սակայն նախ ռասայի հոթետիկայի այդ առանձնահատկությունները,—վորչափ նրանք հարատե են մնում,—չեն կարող իրենց աղղեցությամբ փոխել արվեստի զարգացման ընթացքը, իսկ յերկրորդ՝ նրանք ևս հաստատում են միայն միառժամանակ, այսինքն՝ միայն վորոշ պայմաններում։ Այն գեղագիրում, յերբ ավագ ցեղը հարկադրված և լինում ընդունելու մի ուրիշ, ավելի զարգացած ցեղի գերազանցությունը, նրա ռասայի ինքնարավականությունը չքանում է և նրա տեղը հանդես ե գալիս ուրիշի, առաջ ծիծաղելի, իսկ յերբեմն ամոթալի ու զպվելի համարված ճաշակներին նմանվելը։ Այսեղ վայրենու հետ նույնն է տեղի ունենում, ինչ քաղաքակրթված հասարակակության մեջ գյուղացու հետ, վորն ոկզում

*) Այդ ամենի մասին տես Վիլհելմ Լյուբկեյի՝ արվեստի պատմության ներածությունը (կառավարեան թարգմանություն)։

**) Այդ մասին տես Գարվինի Descent of man, London 1883, pp. 582—585։

ծաղրում և քաղաքացիների բարքերն ու հագուստը, իսկ տպար—գյուղի վրա քաղաքի ունեցած իշխանության սկզբնավորման ու աճման հետ միասին,—ուժերի և հնարավորության չափ աշխատառմ և յուրացնել դրանք:

Անցնելով պատմական ժողովուրդներին՝ նշենք ամենից առաջ այն, վոր նրանց նկատմամբ ուստա բառն ընդհանրապես չի կարող և չպետք և գործադրվի: Մենք չզիտենք վոչ մի պատմական ժողովուրդ, վորին կարելի լինի անվանել զտարյուն ուստայի ժողովուրդ, նրանցից ամեն մեկը հանդիսանում և տարեկ եթևիկան տարբերի չափազանց տեսական և փոխադարձ ուժեղ բաշաձևման ու խառնուրդի արդյունք:

Բարի յեղիք դրանից հետո վորոշել այս կամ այն ժողովուրդների իգնորացիաների պատմության վրա «ռասայի» ունեցած աղեղցությունը:

Առաջին հայացքից թվում ե, թե ավելի պարզ ու ճիշտ բան չկա, քան այն միտքը՝ թե՝ բնական միջավայրն աղօսւմ և ժողովրդական տեմպերամենտի, իսկ որա միջոցով նաև նրա մտավոր ու եսթետիկ զարդացման պատմության վրա: Բայց հերիք եր, վոր Լաբրիոլան վերհիշեր իր սեփական յերկրի պատմությունը համոզվելու համար, թե այդ միտքը սիալ է: Ժամանակակից իտալացիներին շրջապատում ե միենալոյն բնական միջավայրը, վորի մեջ ապրել են հին հռոմայիցիները, մինչդեռ վորքան քիչ ե նման մեզ ժամանակակից Մենեկքի հարկատուների «տեմպերամենտը» կարթագենի խտառիրտ հաղթողների տեմպերամենտին: Յեթե մենք մտադրվեյինք, որինակ իտալական արվեստի պատմությունը իտալական տեմպերամենտով բացատրել, այդ գեղգում մենք շատ շուտ տարակուսանքով կանգ կառնեյինք այն հարցի առաջ թե ինչ պատճառների շնորհիվ տեմպերամենտն իր կողմից իրաւում խորապես փոխվել և տարբեր ժամանակներում և Առևնինյան թերակղու տարբեր մասերում:

VII

«Թուս գրահանուրյան գոգոլյան տրջանի ուրվագծերի» հեղինակը Զ. Ս. Միլի քաղաքատնտեսության առաջին գրքի առթիվ գրած ծանոթագրություններից մեկում առում ե.

«Մենք չենք ասի, թե ուստան բնավ վոչ մի նշանակություն

չի ունեցել. բնական և պատմական գիտությունների զարգացումը դեռ վերլուծման այնպիսի ճշգրտության չի հասել, վորպեսզի կարելի լինի գեղգերի մեծամասնության առթիվ անպայմանուրեն ասել այսեղ այդ տարբեր բացարձակապես չկա: Ինչ գիտենք, զուցե այս պողպատե դրչի մեջ պլատինի մասնիկ կա, այդ բացարձակորեն հերքել չի կարելի: Կարելի յե մի բան ասել, ըստ քիմիական անալիգի՝ այս գրչի կաղմության մեջ կա անկառկած պողպատե մասնիկների այնպիսի քանակ, վոր կատարելապես չնչին և նրա այն մասը, վորը կարող և պատկանել նրա մեջ յենչին և պատմատինին. և յեթե այդ մասը զոյւթյուն ել ունենա, նրա վրա գործնական տեսակիտից ուշադրություն դարձնել չի կարելի... Յեթե բանը պրակտիկորեն գործեն և, —վարդիք այդ գրչի հետ այսպես, ինչպես ընդհանրապես պետք և վարդիլ պողպատե գրիչների հետո: Ճիշտ նույն ձեռվ ել պրակտիկ գործերում ուշադրություն մի դարձնեք մարդկանց ռասայի վրա, վարվեցեք նրանց հետ ապարզորեն, վորպես մարդկանց հետ... Գուցե ժողովրդի ասան վորոշ աղեղցություն և ունեցել այն խնդրում, վոր մի վարոշ ժողովուրդ գտնվում և այժմ այս, այլ վոչ թե մի ուրիշ վիճակում: Բացարձակորեն ժխտել այդ չի կարելի: պատմական անալիգը գեռ չի հասել մաթեմատիկական, պարտադիր ճշտության: Նրանից հետո, ինչպես և արդի քիմիական անալիգից հետո, մոռակա և գորի համար հարկավոր են հետազոտման ավելի նուրբ յեղանակներ, վորոնք դեռ անմատչելի յեն դիտության արդի վիճակին: Բայց այդ մնացորդը խիստ փոքր ե: Յուրաքանչյուր ժողովրդի արդի գրության առաջանաւու գործում այնպիսի մի հսկայական մաս և պատկանում ցեղական բնական հատկություններից կախումն չունեցող հանգամանքների ներգործությանը, վոր յեթե մարդկացին ընդհանուր բնույթից տարբեր այդ աւրույն հատկություններն անդամ գոյություն ունենային, ապա նրանց գործողության համար կմնար խիստ քիչ, անչափ, միկրոսկոպորեն քիչ տեղ»:

Այս բառերը հիշեցինք, յերբ կարգում եյինք Լաբրիոլայի նկատառությունը մարդկության հոգեոր զարգացման պատմության վրա ռասայի ունեցած աղեղցության մասին: «Գոգովան տրջանի ուրվագծերի» հեղինակը գլխավորապես գործնական տեսակետից ե

հետաքրքրվել ուստայի նշանակության հարցով, բայց նրա սսած-ները շարունակ նկատի պետք ե ունենային նաև բոլոր նրանք, ովքեր զբաղվում են զուտ թերթախիկ հետազոտություններով։ Հասարակական գիտությունն անչափ շահ կունենա, յիթե մենք, վերջապես, թաղնենք տվյալ ժողովրդի հոգուր պատմության մեջ մեղ համար ամեն մի անհասկանալի բան ուստայի վրա բարդելու վատ սովորությունը։ Ցեղային հատկություններն այդ պատմության վրա զուցե և ունեցել են վորոշ ազդեցություն։ Բայց այդ յենթադրական աղդեցությունը, հավանորեն, այնքան անչափե-վորեն քիչ ե յեղել վոր հետազոտության շահերից յելնելով, ավելի լավ ե այն ընդունել զերոյի հավասար և այս կամ այն ժողովրդի զարգացման մեջ նկատվող առանձնահատկությունները դիտել վորպես արդյունք հատուկ պատմական պայմանների, վո-րոնց մեջ տեղի յե ունեցել այդ զարգացումը, այլ վոչ թե վորպես սասայի աղդեցության հետևանք։ Հասկանալի յե, մեղ քիչ դեպ-քեր չեն պատահի, յեր մենք ի վիճակի չենք լինի ցույց տա-լու, թե վորոնք եյին այն պայմանները, վորոնք առաջ եյին բե-րել մեզ հետաքրքրություն պատճառած առանձնահատկություն-ները։ Բայց այն, ինչ այսոր չի յենթարկվում գիտական հետա-զոտության միջոցներին, վաղը կարող ե զիջել նրանց։ Իսկ ու-սայական հատկությունները վկայակոչելը անհարմար ե նրանով, վոր նա զագարեցնում ե հետազոտությունը հենց այնտեղ, վոր-տեղ նա պետք ե սկսվեր։ Ինչու ֆրանուական պոեդիայի պատ-մությունը նման չեր գերմանական պոեդիայի պատմությանը։ Շատ հասարակ պատճառով, ֆրանուական ժողովրդի տեմպերա-մենան այնպես եր, վոր նա չեր կարող ունենալ վոչ կեսսինգ, վոչ Եիլլեր, վոչ Դյոթե։ Դեռ, չսորհակալություն բացարության հա-մար։ այժմ մնենք ամեն ինչ հասկանում ենք։

Լաբրիոլան կամեր, իհարկե, վոր ինքն ավելի քան հեռու յե նման, վոչինչ չբացատրող բացարություններից։ Ցեղ այդ ձիշտ կիներ։ Ընդհանրապես առած՝ նա հիանալի հատկանում ե նրանց վող անպետքությունը և շատ լավ գիտե, թե վոր կողմից պետք ե մոտենալ այն խնդիրների լուծմանը, վորոնցից վորպես որինակ մենք բերել ենք վերը։ Բայց, ընդունելով, վոր ժողո-վորդների հոգուր զարգացումը բարդանում ե նրանց ուստայ-կան հատկություններով, նա զբանով իսկ իր ընթերցողներին

մեծ մոլորության մեջ գցելու վտանգն ուներ և հանդես ե բերել հին մտածելակերպին՝ թեկուզ և աննշան մանրամասնությունների մեջ՝ վորոշ հասարակական գիտության համար զսամակար, զի-ջումներ անելու պատրաստակամություն։ Ահա հենց այդպիսի զի-ջումների գեմ ել ուղղված են մեր նկատողությունները։

Մենք առանց հիմքի չենք հին անվանում այն հայացքը իդեոլոգիաների պատմության մեջ ուստայի ունեցած դերի նկատ-մամբ, վոր մենք վիճարկում ենք։ Նա հասարակ տարատեսակն ե անցյալ դարում խիստ տարածված այն թերթայի, ըստ վորի պատմության ամբողջ ընթացքը բացատրվում ե մարդկային բնու-թյան հատկություններով։ Պատմության մատերիալիստական ըմբռնումը միանդամայն անհամատեղելի յե այդ թերթայի հետո նոր հայացքի համաձայն՝ հասարակական մարդու բնությունը փոխվում ե հասարակական հարաբերությունների հետ միասին։ Հե-տևարար, մարդկային բնության ընդհանուր հատկությունները չեն կարող պատմությունը բացատրել։ Պատմության մատերիա-լիստական ըմբռնման զերմ ու համոզված կողմնակից Լաբրիոլան, սակայն, ընդունել ե վորոշ թեկուզ շատ քիչ չափով, հին հա-յացքի ճշտությունը և։ Բայց գերմանացիները զուր չեն առում։ Wer A sagt, muss auch B sagen։ Հին հայացքի ճշտությունը մի գեպօտմ ընդունելով Լաբրիոլան պետք ե ընդուներ այդ հա-յացքը նաև միքանի այլ գեպօտմում։ Կարիք կմ առելու, վոր յերկու հակադիր հայացքների այդ միացումը պետք ե զսամեր նրա աշխարհայացքի բարեկազմությանը։

VIII

Յուրաքանչյուր տվյալ հասարակության կազմակերպությու-նը վորոշվում ե նրա արտադրողական ուժերի վիճակով։ Այդ վի-ճակի փոփոխմամբ անպայմանորեն վաղ թե ուշ պետք ե փոխվի նաև հասարակական կազմակերպությունը։ Հետևաբար նա ան-կայուն հավառարակշության մեջ ե գտնվում ամենուրեք, վոր-տեղ հասարակական արտադրողական ուժերն են աճում։ Լաբրիո-լան շատ ճիշտ ե նկատում, վոր հենց այդ անկայունությունը՝ նրանից առաջացող հասարակական շարժումների և հասարակա-կան գառակարգերի պայքարի հետ միասին, մարդկանց պահպա-նում ե մտավոր ճացումից։ Անտագոնիզմն առաջադիմության

զիմավոր պատճառն ե, առում ե նա, կը կնելով գերմանացի շատ հայտնի մի տնտեսագետի միտքը։ Մակայն հենց այլտեղ ել նա վերապահություն և անում։ Ըստ նրա կարծիքի, շատ սխալ կիրաներ յերեակայել, թե մարդիկ միշտ և բոլոր գեղագերում լավ հասկանում են իրենց գրությունը և պարզ տեսնում են այն հասարակական խնդիրները, վոր նա նրանց առջև ե գնում։ «Այդպիս մտածել, —առում ե նա, —կնշանակի յենթագրել մի ինչ-վոր անհավանական բան, մի ինչ-վոր յերբեք չեղած բան»։

Մենք ընթերցողներին խնդրում ենք մեծ ուշագրություն դարձնել այս վերապահությանը։ Լարդիոլան իր միտքը հետեւյալ կերպ և զարդացնում։

«Իրավական ձեռքը, քաղաքական գործողությունները և հասարակական կազմակերպության փորձերը յեղել են և լինում են յերեմն հաջող, իսկ յերբեմն ոխար, այսինքն՝ գրությանն անհամապատասխան, նրան վոչ պրոՊՐԵՐՈՒՆԱԼ։ Պատմությունը լի յե սխալներով։ Այդ նշանակում ե, վոր յեթե նրանում ամեն ինչ անհրաժեշտ ել բոլոր նրանց տվյալ մտավոր զարդացման պահին, ում վիճակված և հաղթահարի վորոշ դժվարություններ կամ լուծել վորոշ խնդիրներ, և յեթե նրանում ամեն ինչ իր բավարար պատճառն ունի, ապա ամեն ինչ բանական չեր այն իմաստով, վոր լավատեսներն են տալիս այդ բառին։ Մի վորոշ ժամանակ անցնելուց հետո, հասարակական բոլոր փոփոխությունների արդատական պատճառները, այսինքն՝ փոփոխված տնտեսական պայմանները հասցնում եյին և հասցնում են, յերեմն խիստ զարտուղի ճանապարհներով, իրավունքի այնպիսի ձեւերի, քաղաքական այնպիսի կազմության և հասարակական այնպիսի կազմակերպության, վորոնք համապատասխանում են նոր գրության։ Բայց հարկավոր չե կարծել, թե մտածող կենադանու բնազդային իմաստությունը դրսեւրպվել ու դրսեւրպվում ե, sic et simpliciter, բոլոր գրությունների հստակ ու լիակատար ըմբռնման մեջ, և թե, քանի վոր տրված ե տնտեսական ստրուկտուրան, ուրեմն մենք շատ հասարակ տրամաբանական ուղիղվ կարող ենք նրանից ամեն ինչ յեղբակացնել։ Իր հերթին բացարձելի տպիտությամբ նշանավոր չափով բացատրվում ե այն, թե ինչու պատճությունն ընթացել ե այսպես և վոչ այլ կերպ։

մարդը ժառանգել ե իր նախնիներից՝ կենդանիներից և գեռ շատ հեռու յե լիակատար հաղթահարելուց, նաև բոլոր կրքերը, բոլոր անարդարացիությունները և փչացածության բոլոր զանազան տեսակները—ամբողջ ստությունը, ամբողջ կեղծավորությունը, տմբողջ լպիրշությունը,—վորոնք անխուսափելիորեն պետք ե ծնվեցին և ծնվում են այն հասարակության մեջ, վոր հիմնված ե մարդը մարդուն յենթարկելու վրա։ Մենք կարող ենք, առանց ուսուպիաների մեջ ընկնելու, նախատեսել, և մենք, իրոք, նախատեսում ենք, ապագայում այնպիսի հասարակության առաջացումը, վորը, պատմական շարժման որենքների համաձայն, առաջանալով ժամանակակից հասարակակարգից,—և ինչու այդ կարգի հակառակություններից,—այլևս դառակարգերի անտագոնիզմ չի ճանաչի... Բայց այդ ապագայի գործն ե, և վոչ ներկա կամ անցյալ ժամանակի։ Իր ժամանակին ձիշտ կազմակերպած հասարակական արտադրությունը կազմատի կյանքը կույր պատահականության տիրապետությունից, մինչդեռ այժմ պատահականությունը ամեն տեսակի անսպասելի պատահարների և գեղքերի չնախատեսված հյուսվածքի բազմապիսի պատճառն և հանդիսանում»*։

Այս ամենի մեջ շատ բան իրավացի յե։ Բայց մոլորության հետ քմահաճորեն հյուսվելով՝ ինքը ծշմարտությունն այսաեզ ընդունում և վոչ բոլորովին հաջող պարագաքի տեսք։

Լարդիոլան անպայման իրավացի յե, ասելով, թե մարդիկ բնավ միշտ չե, վոր պարզ ըմբռնում են իրենց հասարակական գրությունը և վոչ ել միշտ լավ գիտակցում են այն հասարակական խնդիրները, վորոնք ըղբում են նրանից։ Բայց յերբ նա, հիմնվելով գրա վրա, սգիտությունը կամ սնոտիապաշտությունն ե վկայակոչում՝ վորպես համայնակեցության ու շատ հասարակական ձեւերի և շատ սովորությների պատճառական պատճառ, ապա՝ ինքն ել այդ չնկատելով՝ նա վերապատճառ և XVIII դարի լուսավորիչների անսարքան ապիտությունը վորոյն այն կարևոր պատճառներից մեկը մատնանշելը, վորոնք բացատրում են, թե «ինչու պատճությունն ընթացել ե այսպես և վոչ այլ կերպ», հարկավոր եր վարչել, թե ինչ իմաստով, իրոք, կարելլ յե այստեղ այդ բառը կիրառել։ Շատ մեծ սիալ կլիներ կարծել թե այդ հասկանալի յե ինքնըստինքյան։ Վոչ, այդ բնավ ել

* Ասայ, pp. 183—185.

այնքան հասկանալի չե, և վոչ այնպես պարզ, ինչպես թվում ե:
Նայեցեք XVIII դարի Ֆրանսոֆիային: Նրա յերրորդ գասի բոլոր
մտածող ներկայացուցիչները ջերմորեն ձգտում են աղատության
ու հավասարության: Այդ նպատակին հասնելու համար նրանք
պահանջում են բաղմաթիվ հնացած հասարակական հիմնարկների
վերացումը: Բայց այդ հիմնարկների վերացումը կապիտալիզմի
հաղթանակ եր նշանակում, կապիտալիզմի, վորը, ինչպես այդ
մեզ այժմ շատ լավ հայտնի յե, դժվար ե անվանել աղատության
ու հավասարության թագավորություն: Ուստի կարելի յե ասեր
թե անցյալ դարի փիլիսոփաների ազնիվ նպատակին հասնել
չեղավ: Կարելի յե տաել նաև, վոր փիլիսոփաները չեյին կարո-
ղանում ցույց տալ այն միջոցները, վորոնք անհրաժեշտ եյին
նրան հասնելու համար, ուստի կարելի յե մեղադրել նրանց
զգացորդյան մեջ, ինչպես և այդ անում եյին շատ սոցիալիստ-
ուստափիստներ: Ինքը Լաբրիոլան աղջում և այն հակասության
առթիվ, վոր կար այն ժամանակվա Ֆրանսոֆիայի իսկական տըն-
տօսական տեսնդենցի և նրա մտածողների իդեալների միջև:
«Ժարորինակ տեսարան, տարորինակ կոնտրաստ», բացականչում
և նոտ: Բայց այստեղ ինչ տարորինակ բան կա: Յեկ ինչի՞ մեջ
եր Փրանսոսական լուսավորիչների «տղիտությունը»: Նրանում,
վոր նրանք ընդհանուր բարեկեցության հասնելու միջոցներին
այնպես չեյին նայում, ինչպես մենք ենք նայում ներկայումս:
Բայց չե վոր այդ միջոցների մասին այն ժամանակ խոսք ան-
դամ չեր կարող լինել: մարդկության պատմական շարժումը,
այսինքն՝ ավելի ճիշտ՝ նույն արտադրողական ուժերի զարգացումը
այդ միջոցները դեռևս չեր սեղծել: Կարդացեք Մարլիի «Doutes,
proposés aux philosophes économistes», կարդացեք Մորելլիի
«Code de la nature»—դուք կտեսնեք, վոր, վորչափով այդ
դրոշները մարդկային բարեկեցության պայմանների մասին ու-
նեցած իրենց հայացքներով բաժանվում եյին լուսավորիչների
հոծ մեծամասնությունից, վորչափով նրանք յերազում եյին մաս-
նավոր ռեփականության վոչնչացման մասին, այն չափով ել
նրանք նախ՝ բացահայտ և աղաղակող հակասության եյին հան-
դում իրենց դարաշրջանի ամենակարևոր, ամենակենասական և
համաժողովրդական կարիքների նետ, իսկ յերկրորդ՝ խավար
կերպով գիտակցելով այդ՝ նրանք իրենց յերազները

կատարելապես անիրտկանանալի եյին համարում: Հետևոքար, մի
անգամ ևս՝ ինչի՞ մեջ եր լուսավորիչների տղիտությունը նրա
մեջ, վոր նրանք, դիտակցելով իրենց ժամանակվա հասարակա-
կան կարիքները և ճիշտ ցույց տալով նրանց բավարարման
յեղանակները (հին արտօնությունների վերացում և այլն), այդ
յեղանակներին վերագրում եյին ծայրահեղորեն չափազանցըրած
նշանակություն, այսինքն՝ ընդհանուր յերջանկության ուղիի
նշանակությունը: Այդ գեռ շատ վայրի տղիտություն չե, իսկ
գործնական տեսակետից պետք և համարել այն նույնիսկ վաշ
անոգուտ, քանի վոր վորչափ լուսավորիչներն ավելի եյին հա-
վատում իրենց պահանջած բարենորդությունների ունիվերսալ նշա-
նակությանը, այնքան ավելի յեռանդագին պետք և ձգեյին
նրանց:

Լուսավորիչներն անկառոկածելի տղիտություն յերևան բերին
այն իմաստով, վոր նրանք չեյին կարողանում գտնել այն թելը,
վոր կապում եր իրենց հայացքներն ու ձգտությունները այն ժամա-
նակվա Ֆրանսոֆիայի անտեսական դրության հետ, և նույնիսկ
չեյին կառկածում, թե նման թել գոյություն ունի: Նրանք իրենց
վրա նայում եյին, վորպես բացարձակ ճշմարտության մունետիկ-
ների վրա: Մենք գիտենք այժմ, վոր բացարձակ ճշմարտություն
չկա, վոր ամեն ինչ հարաբերական և, ամեն ինչ կախված և
տեղի ու ժամանակի պայմաններից, բայց նենց այդ պատճառով
ել մենք խիստ զգույշ պետք և դատենք պատմական տարբեր
դարաշրջանների «տղիտության» մասին: Նրանց տղիտությունը,
վորչափով նա յերևան և գալիս նրանց հատուկ հասարակական
շարժումների, ձգտությունների և իդեալների մեջ, նույնպես հարաբե-
րական եւ:

IX

Ի՞նչպես են ծագում իրավական նորմաները: Կարելի յե
տաել, վոր յուրաքանչյուր այդպիսի նորմա իրենից ներկայաց-
նում և վորեն հին նորմայի կամ վորեն հին սովորույթի վերա-
ցումը կամ կերպարանափոխությունը: Ինչու յեն վերացվում էին
սովորույթները: Վորովհետև նրանք գաղարում են համապատաս-
խանիլուց այն նոր «պայմաններին», այսինքն՝ նոր փաստական
այն հարաբերություններին, վորոնց մեջ մարդիկ մտնում են

արտադրության հասարակական պրոցեսում։ Նախնագարյան կումունիզմը չքացավ շնորհիվ արտադրողական ուժերի աճման։ Բայց արտադրողական ուժերը միայն աստիճանները են առաջը։ Ուստի և արտադրության հասարակական պրոցեսի մեջ մարդկանց նոր, փաստական հարաբերությունները միայն առաջնահարար են աճում։ Ուստի և միայն աստիճանաբար և աճում էին նորմաների կամ սովորույթների ձնշղողականությունը, իսկ հետեւարար նաև մարդկանց նոր փաստական (անտեսական) հարաբերություններին համապատասխան իրավունքն արտահայտություն տալու կարիքը։ Մասձող կենդանու բնազդական իմաստությունն և սովորաբար հետևում այդ փաստական փոփխություններին համապատասխան իրավական համապատասխան մի վորոշ մտածին խանդարում են իրենց կենսական նպատակներին համապատասխան, իրենց կենսական կարիքները բավարարելու, ապա հասարակության այդ մտած անպայմանորեն և չափազանց հեղտությամբ կողա նրանց ձնշղողականության գիտակցության, դրա համար մի քիչ ավելի շատ իմաստություն և հարկավոր, քան այն բանը գիտակցելու համար, թե անհարմար և խիստ նեղ կոշիկ կամ չափազանց ծանր գենք կրելը։ Բայց ավագանը իրավական ձեր ձնշղողականության գիտակցությունից մինչեւ նրան վերացնելու գիտակցական ձգտումը, ինարկե, դեռ հեռու յե։ Ակզրում մարդիկ ջանում են պարզապես շրջանցել (օխօդու) դրանք յուրաքանչյուր մտանազգոր դեպքում։ Հիշեցեք, թե ինչպես եր լինում մեզանում դյուլացիական խոշոր ընտանիքներում, յերբ՝ նոր ծնվող կապիտալիզմի ազգեցության տակ ընտանիքի տարբեր անդամների համար վաստակի նոր վոչ միատեսակ աղբյուրներ ելին յերևան գալիս։ Այն ժամանակ ընտանեկան սովորական իրավունքը ձնշղող եր գառնում այն բախտավորների համար, վորոնք մյուսներից ավելի ելին վաստակում։ Բայց այդ բախտավորները բնավ ել այնքան դյուրին և այնքան շուտ սիրո չարին ըմբոստանալու հին սովորույթի դեմ։ Յերկար ժամանակ նրանք պարզապես խորամանկության ելին զիմում, անավագներից թագցնում ելին վաստակած փողի մի մասը։ Բայց արնեական նոր կարգն աստիճանաբար ամրանում եր, հին ընտանեկան կենցաղն ավելի ու ավելի յեր խորին պատճեն։ Նրա վերացմանը շահախնդիր ընտանիքի անդամներն ավելի ու ավելի ելին

զլուխ բարձրացնում, բաժանումներն ավելի հաճախակի եյին դասնում, և, վերջապես, եին սովորույթը չքանում եր՝ իր տեղը զիջելով նոր սովորույթին, վորին կյանքի եյին կոչել նոր պայմանները, նոր փաստական հարաբերությունները, հասարակության նոր եկանումիկան։

Սովորաբար, իր դրության գիտակցման աճումը մարգկանց մեջ ավելի կամ պակաս չափով հետ և մնում այն նոր փաստական հարաբերությունների աճումից, վորոնք փոխում են այդ դրությունը։ Սակայն այսուամենայնիվ գիտակցությունը հետեւ վում և փաստական հարաբերություններին։ Վորտեղ թույլ և մարդկանց գիտակցական ձգտումը՝ հին հիմնարկները վերացնելու և նոր իրավական կարգ հաստատելու, այնուեղ նասարակական եկոնոմիկան այդ նոր կարգը նախապատրասել և վոչ լույսին։ Այլ կերպ ասած, գիտակցության անհատակությունը—«ուհասամքի վրիպումները», «տգիտությունը»—պատմության մեջ հաձախ մի բանի նշան են միայն, այն եւ վոր գեռես վատ և զարգացած այն առարկան, վոր պետք և գիտակցել, այսինքն՝ նոր սկզբնական այլուրի առաջական մարդկան տգիտությունը—այն բանը չգիտենալն ու չըմբռնելը, ինչը գետ չկա, ինչը գետ ծագման պրոցեսում և գտնվում,—ակնհայտ եւ, ոտոկ հարաբերություն տգիտություն եւ։

Կա տգիտության մի այլ տեսակ, տգիտություն բնության վերաբերմամբ։ Նրան կարելի յե բացարձակ անվանել։ Նրա չափը բնուրյան իշխանուրյանն եւ մարդու վրա։ Յեկ վորովիետե արտադրողական ուժերի զարգացումը նշանակում է մարդու իշխանության աճում բնուրյան վրա, ապա պարզ ե, վոր արտադրողական ուժերի ավելացումը բացարձակ տգիտության փոքրացումն է նշանակում։ Մարդկանց չհասկացած, ուստի և նրանց իշխանությանը չենթարկված՝ ընության յերևույթներն առաջ են բերում տարբեր սննութիապաշտություններ։ Հասարակական զարգացման վորոշ ստագիտայում սննութիապաշտական պատկերացումները սերտառեն յուսվում են մարդկանց բարոյական ու իրավական հասկացությունների հետ, վորոնց նրանք այդ ժամանակ յուրատեսակ յերանգ են տալիս *): Արտադրության հասարակական պրո-

*) Իր «Ծրենքը և սովորույթը Կովկասում» գրքի մեջ Մ. Ս. Կովկասիկին տասն և. «Փշտիկների կրթնական հավատալիքների և անոտիապաշտությունների

շեսում մարդկանց ունեցած նոր փառուական հարաբերությունների տճումով կյանքի կոչողող պայքարի պրոցեսում կրօնական հայցքները հաճախ մեծ գեր են կատարում: Թե նորարարները և թե պահպանողականները աստվածների ոգնությանն են դիմում՝ նրանց պաշտպանության տակ դնելով այս կամ այն հիմարկները կամ նույնիով այդ հիմնարկները աստվածային կամքի արտահայտությամբ բացատրելով: Հասկանալի յէ, վոր եվմենիդուրը, վորոնց մի ժամանակ հույները մայրական իրավունքի կողմանիցներ եյին համարում, նրա պաշտպանության համար նույնքան քիչ բան են արել զորքան Միներվան՝ իր թե իրեն սիրելի հայրական իշխանության հաղթանակի համար: Աստվածներին ու ֆետիշներին ոգնության կանչելով, մարդիկ իզուր վատնում եյին իրենց աշխատանքն ու ժամանակը, բայց եվմենիդներին հավատալ թույլատրող տղիտությունը չեր խանգարում այն ժամանակիա հունական պահպանողականներին հասկանալու, վոր հին իրավական կարգը (ավելի ճշգրիտ՝ հին սովորույթի իրավունքը) ավելի լավ և ապահովում նրանց շահերը: Ճիշտ նույնպես այն մնութիւնապաշտությունը, վոր թույլատրում և Միներվայի վրա հույսեր դնել, չեր խանգարում նորարարներին հին կենցաղի անհարմարությունները գիտակցելու:

Քննությունը մեղ բերում և այն յեղակացության, վոր ուղղափառության պաշտոնական քողի տակ այդ ժողովուրդը միջնեւ որս կանգնած և զարդարման այն ստադիայում, վորը Թեյլորն այնպես հաջող կերպով անիմիզմ անվանեց: Այդ ստադիային, ինչպես հայտնի յէ, սովորաբար ուղեկցում և ինչպես հասարակական բարոյականության, այնպես ել իրավունքի գնուական յենթարկումը կրոնին» (Հ. Ա. Եջ 82): Բայց բանն ել հենց այն ե, վոր ըստ Թեյլորի նախաղարյան անիմիզմը վոչ մի ազդեցուրյան չունի վոչ բարյականության և վոչ իրավակերի վրա: Զարդացման այդ ստադիայում «բարոյականության և իրավունքի միջնեւ վոչ մի առնչություն չկա, կամ այդ առնչությունը գանդում և առդմույն վիճակում»: «Վայրենի անիմիզմը զբեթի միանգամայն զուրկ և բարյական այն տարրից, վոր բարյակրթված մարդու աչքում տիեն մի պրակտիկ կունի եյությունն և կազմում... բարյական որենքներն ունեն իրենց ուրույն հիմքը» և այլն: La civilisation primitive. Paris 1876, t. II, pp 464—463. Ահա թե ինչու ավելի ճիշտ կլինի առել վոր կրօնական մնութիւնապաշտությունները հյուսվում են բարյական և իրավական հասկացողությունների հետ հասարակական զարգացման միայն վորոց, համեմատաբար բավականաշափ բարձր առտիճանի վրա: Մենք զատ ցավում ենք, վոր տեղը մեղ թույլ չի տալիս այսակ ցույց տար թե այդ ինչպես և բացարում արդի մտաերիւմքը:

Բոռնեո կղզու դայակները փայտ կտրելիս սեպի գործածությունը չգիտեյին: Յերբ յելքուպացիներն իրենց հետ սեպի բերին, տեղական իշխանությունը հանդիսավոր կերպով արգելեց նրա գործածությունը *): Այդ ըստ յերեսութիւն, նրանց սգիտարյան ապացույցն եր ինչ կարող է լինել ավելի անիմաստ, քան այն գործիքի գործածությունից հրաժարվելը, վոր հեշտացնում և աշխատանքը: Սակայն մտածեք, և դուք կառեք, դուցե, վոր դրա համար կարելի յէ թեթեացնող հանգամանքներ գտնել: Աշխատանքի յելքուպական գործիքների գործածության արգելումը հավանութեն լեվոպական ազգեցուրյան դեմ պայմանելու արտահայտություններից մեկն և յեղել, ազգեցություն, վոր սկսել եր քայքայել տեղական հին կարգերի ամրությունը: Տեղական իշխանությունը աղոտ կերպով գիտակցում եր, վոր յելքուպական սովորույթներ մտցնելու գեղքում այդ կարգից քարը քարին չի մնա: Սեպն ինչպով պատճառով ավելի ուժեղ կերպով, քան յելքուպական այլ գործիքները, նրանց հիշեցնում եր յելքուպական ազգեցության քայքայիչ բնույթի մասին: Յեկ ահա նրանք հանդիսավոր կերպով արգելեցին նրա գործածությունը: Ինչու հենց սեպն եր վտանգավոր նորմուծությունների սիմվոլ հանդիսանում նրանց աչքում: Այդ հարցին մենք կարող ենք բավարար պատիսանել. մեզ հայտնի չե այն պատճառը, վորով սեպի պատճառը կերպումը տեղացիների գլխում զուգորդվում եր իրենց հին կենցաղին: սպառնացող վտանգի պատկերացման հետ: Բայց մենք կարող ենք հավատացած առել վոր տեղացիները բնավ չեյին սխալվում, յերկյուղ կերպով իրենց հին կարգի ամրության համար, յելքուպական ազգեցությունն, իրոք, իիստ արագ և ուժեղ կերպով աղավաղում ե, յեթե չի կործանում, իրեն յենթարկված վայրենիների ու բարբառների սովորույթները:

Թեյլորն ասում ե, վոր բարձրաբարբառ գտատապարտելով սեպի գործածությունը, դայակներն, այնուամենայնիվ, ողտվում եյին նրանից, յերբ այդ կարող եյին մյուսներից թագուն անել: Ահա և ձեզ «կեղծավորություն»՝ տղիտությանն ավելացրած: Բայց վթրտեղից եր այդ ծագել: Հավանութեն նա առաջացել եր փայտ կոտրելու նոր յեղանակի առավելությունները զիտակցելուց, վորն ուղեկցվում եր հասարակական կարծիքից յերկյուղ

*) E. B. Tylor. La civilisation primitive. Paris 1876, t. I, p 82.

Կրելով կամ իշխանության հետապնդումներով։ Մտածող կենդանու բնագդային իմաստությունը քննազատում եր, այսպիսով, հենց նույն այն միջոցը, վոր նրան եր պարտական իր ծագումը։ Յեզ նա իրավացի յեր իր քննադատության մեջ յելքուական գործիքների գործածության արգելումը յելքուական ազդեցության վերացում չեր նշանակում բնավ։

Լարիոլայի արտահայտությունը գործ ածելով, մենք կկարգանայինք տաել վոր ներկա դեպքում դայակներն իրենց դրությանը չհամապատասխանող, նրան վոչ պրապորցիոնալ միջոց եյին գործադրել։ Մենք կատարելապես իրավացի կլինեյինք։ Յեզ մենք կկարողանայինք լարիոլայի այդ նկատողությանն ավելացնել վոր մարդկել շատ հաճախ այդպիսի վոչ պրապորցիոնալ գրությանը չհամապատասխանող միջոցներ են հնարում։ Բայց ինչ և հետեւմ դրանից։ Միայն այն, վոր մենք պիտի ջանանք բացահայտել չկա արդյոք վորեւ կախում մարդկանց այդ տեսակի սխալների մի կողմից և, մյուս կողմից, նրանց հասարակական հարաբերությունների զարգացման բնույթի կամ աստիճանի միջև։ Այդպիսի կախումն անկատած գոյություն ունի։ Լարիոլան ասում ե, վոր տպիտությունն իր հերթին կարելի յե բացատրել։ Մենք կասենք վոչ միայն կարելի ին, այլև պետք ե բացատրել, իերե միայն հասարակական գիտությունն ի վիճակի յե խիս գիտություն դառնալու։ Յեթե «տպիտությունը» կարելի յե բացատրել հասարակական պատճառներով, ապա կարելք չկա այն վկայակոչելու, կարելք չկա ասելու, թե նրանումն է այն խնդրի լուծումը, թե ինչու պատճությունն այսպես ե ընթացել այլ վոչ թե մի այլ կերպ։ Լուծումը նրանումն չե, այլ այն հասարակական պատճառներում, վորոնք այն առաջ են բերել և տվել նրան այս, և վոչ թե մի այլ տեսք, այս, և վոչ թե մի այլ բնույթ։ Ինչու պետք ե, ուրեմն, գուշ ձեր հետազոտությունը սահմանափակեք տպիտության հասարակ, վոչինչ չբացատրող մատնանշումներով։ Յերբ խոսք պատմության գիտ սկան բնբոնամասն մասին ե, ապա սփիտության վրա նիմնվելը վկայում է հետազոտվի սփիտության մասին միայն։

X

Դրական իրավունքի յուրաքանչյուր նորմա մի վորոշ շահ և պաշտպանում։ Վժրտեղից են շահերն ոտացվում։ Արդյոք

Նրանք մարդկային կամքի ու մարդկային գիտակցության արդյունք են հանդիսանում։ Վոչ, նրանք ստեղծվում են մարդկանց անտեսական հարաբերություններով։ Մագելուց հետո այդ շահերն այսպես թե այսպես անդրադաւնում են մարդկանց գիտակցության մեջ։ Վորեւ շահ պաշտպանելու համար հարկավոր ե գիտակցել։ Ուստի և գրական իրավունքի յուրաքանչյուր սիստեմ կարելի յե և պետք ե գիտել վորպես գիտակցության արգյունք^{*}։ Մարդկանց գիտակցությունը չե, վոր կյանքի յե կոչում այն շահերը, վորոնց պաշտպանում ե իրավունքը, հետևաբար նրանով չի վորոշվում իրավունքի բովանդակությունը։ Բայց հասարակական գիտակցության (հասարակական հոգեբանության) վիճակով ե ավյալ գարագրականում վորոշվում այն ձևը, վոր մարդկային գլուխների մեջ կընդունի և անդրադաւում։ Առանց նկատի առնելու հասարակական գիտակցության վիճակը, մենք միանգամայն չեյինք կարողանա բացատրել մեզ իրավունքի պատճությունը։

Այդ պատճության մեջ պետք ե միշտ ու հոգատարությամբ տարբերել ձևը բովանդակությունից։ Ձևական կողմից իրավունքն իր վրա զգում ե՝ բոլոր մյուս իդեոլոգիաների պես՝ բալոր մասցյալ իդեոլոգիաների, կամ, առնվազը, նրանց մի վորոշ մասի կրոնական հավատալիքների, փիլիսոփայական հասկացողությունների և այլնի ազգեցությունը։ Այդ միակ հանգամանքն արգել մի վորոշ—յերեմն խիստ նշանակելի, —աստիճանով դժվարացնում ե այն կախման բացահայտումը, վոր գոյություն ունի

*) «Իրավունքը, այսպես կոչված ֆիզիկական, բնական ուժերի նման, մարզու զործողություններից անկախ գոյություն ունեցող մի բան չեմ։ Ըստ հակառակ, զա մի կարգ ե, վոր մարդկել ասմանձև են իրենց համար։ Մարդկը զործուներության մեջ յենթարկված ե արդյոք պատճառակենաւթյան որենքն, թե զործում ե աղատ, կամայական կերպով—լա տվյալ հարցի համար միենալու և ողատառության որենքների, այնուամենախիլ ստեղծվում ե վոչ թե անկախ, այլ ընդհակառակը, վոչ այլապես, քան մարզու զործուներության շնորհիվ, նրա միջոցավ» (Ն. Մ. Կորկունով. «Լեռնայի ու օնայի տեօրիա ու պարագաներ» Պ. Պետերբուրգ, 1894 թ., եջ 279). Սա միանդամայն արգարացի յե, թեղեւ և վաս և արտահայտված։ Բայց պ. Կորկունովը մօսացել ե ավելացնել, վոր իրավունքը պաշտպանած շահերը վոչ մարդկել են առեղծում իրենց համար, այլ վորոշվում են արտադրության հասարակական պրոցեսում նրանց ունեցած փոխադրձ հարաբերություններով։

մարդկանց իրավական հասկացողությունների և արտակրության հասարակական պրոցեսում նրանց ունեցած փոխագալք հարաբերությունների միջև։ Բայց այդ գեռ կես գժբախտություն ե*): Իսկ իսկական գժբախտությունն այն է, վոր հասարակական զարգացման տարբեր ստափախտերում յուրաքանչյուր տվյալ իդեոլոգիա խիստ անմիտեալ է զգում իր վեա մյուս իդեոլոգիաների ազդեցությունը։ Այսպես, հին յեղիպտական ու մասամբ հոռմեական իրավունքը յենթարկված էր կրօնին. նորագույն պատմության մեջ իրավունքը դարձացել է (կրկնում և խնդրում ենք նկատել այս՝ ձետեան կողմից) փիլիսոփայության ուժեղ ազդեցության տակ. Կրօնի ազդեցությունն իրավունքից վերացնելու և այն իր սեփական ազդեցությամբ փոխարինելու համար փիլիսոփայությունը պետք է գիմանար ուժեղ պայքարի։ Այդ պայքարը սոսկ իդեալական անդրադարձումն եր հոգեռականության վեմ յերրորդ գասի մղած հասարակական պայքարի, բայց նա, այնուամենայնիվ, վիթխարի չափով գժվարացնում եր իրավական հիմնարկների ծագման վերաբերմամբ ճշմարիտ հայցքներ մշակելը, վորովհետեւ նրա շնորհիվ նրանք վերացական հասկացողությունների պայքարի աշկարա և աներկրայելի արդյունք եյին թվում։ Հառեկանալի յե, վոր Լաբրիոլան՝ ընդհանրապես տառձ՝ հիանալի հասկանում ե, թե ինչ տեսակի փաստական հարաբերություններ են թագնված հասկացողությունների նման պայքարի հետեւ. Բայց յերբ խնդիրը մանրամասնություններին ե վերաբերում, նա ցած և դնում իր մատերիալիստական վենքը հարցի գժիռության առաջ ե, ինչպես մենք կատարելու առաջարկը համարում ենք այդ իրավական պայքարի մեջ մասնակի այն հետավոր դարաշրջանի մասցուկը, յերբ ամումապետունի կնոջից իսկապես կամ իրեն թե ծագելու փաստով միավորված տոհմական խմբի զրութի հանդիսանում եր մոր կողմից հասակով ավագ ազգականը, ամենամերձավոր կողնատը *): Մըրանից հետեւում ե այն, վոր սիմվոլիկ գործողությունները հառեկանալի յեն դասնում այն ժամանակ միայն, յերբ մենք հառեկանում ենք նրանց արտահայտած հաւաքերությունների իմաստն ու ծագումը. Վերտեղից են ծագում այդ հարաբերությունները։ Այս հարցի պատասխանը պետք ե փնտուել իհարկե, վոչ սիմվոլիկ գործողությունների մեջ, թեպես յերբեմն նրանք կարող են վորոշ սպատակար ակնարկներ տալ. Յեղբոր գերեզմանի վեա հյուսը կտրելու սիմվոլիկ սովորութի ծագումը բացատրվում է ընտանիքի պատմությամբ, իսկ ընտանիքի պատմության բացարությունը պետք ե փնտուել տնտեսական զարգացման պատմության մեջ։

*.) Թեսկա և զու շատ վատ և անդրադարձում նույնիսկ, որինակ, այնպիսի յերկերի վրա, ինչպիսին պ. Կովալեսկու Շլքենքը և սովորությը Կովալեսկում յերկն ե. Պ. Մ. Կովալեսկին այնուել իրավունքը հաճախ դիտում և իրքի կրօնական հայցքների արդյունք. Հետազոտության ճիշտ ուղին այլ պիտի լիներ. պ. Կովալեսկին պետք ե կովկասյան ժողովուրդների և կրօնական հավատվերներին, և իրավական հիմնարկներին նայեր վորպես արտադրության պրացեսում նրանց ունեցած հասարակական հարաբերությունների արդյունքի և, պարզելով մի իդեոլոգիայի ազդեցությունը մի ուրեմն վրա, ավատեր դանել այդ ազդեցության միակ պատճառը. Պ. Կովալեսկին, ըստ յերեսների, ավելի շատ պետք է հակիմ հետազոտության այլպիսի յեղանակների փոք նա իր այլ յերկերում կատերողի կերպով ընդունում է, վոր իրավական նորմաները պատճառականորեն կախված են արտադրության յեղանակներից։

ամանամանափակվել՝ տպիտությունը կամ արագիցիաների ուժը վկայուում է Բացի այդ, նա նաև «սիմվոլիզմ» և մատնանշումը վորպես շատ սովորույթների վերջին պատճառ։

Սիմվոլիզմն, իրոք, նվազ կարեսը «Փակտոր» չե միքանի իդեոլոգիաների պատմության մեջ։ Բայց սովորույթների վերջին պատճառ լինելու համար նա անպետք է. Վերցնենք այսպիսի որինակի. Կովկասյան փշամերի ցեղի մեջ կինը յեղբոր մահվան դեպում կտրում է իր հյուսերը բայց նույնը չի անում, յերբ ամուսինն և մեռնում է. Հյուսը կարելը սիմվոլիկ գործողություն է. Նա փոխարինել և մեռնողի գերեզմանի վրա իրեն զոհաբերելու ավելի վաղեմի սովորութին. Բայց ինչու կինն այդ սիմվոլիկ գործողությունը կատարում է յեղբոր, և վոչ թե ամուսնու գերեզմանի վրա. Պ. Ա. Մ. Կովալեսկու ասելով՝ այդ գծի մեջ «չի կարելի չափանիկ այն հեռավոր դարաշրջանի մասցուկը, յերբ սոհմապետունի կնոջից իսկապես կամ իրեն թե ծագելու փաստով միավորված տոհմական խմբի զրութի հանդիսանում եր մոր կողմից հասակով ավագ ազգականը, ամենամերձավոր կողնատը *): Մըրանից հետեւում ե այն, վոր սիմվոլիկ գործողությունները հառեկանալի յեն դասնում այն ժամանակ միայն, յերբ մենք հառեկանում ենք նրանց արտահայտած հաւաքերությունների իմաստն ու ծագումը. Վերտեղից են ծագում այդ հարաբերությունները։ Այս հարցի պատասխանը պետք ե փնտուել իհարկե, վոչ սիմվոլիկ գործողությունների մեջ, թեպես յերբեմն նրանք կարող են վորոշ սպատակար ակնարկներ տալ. Յեղբոր գերեզմանի վեա հյուսը կտրելու սիմվոլիկ սովորութի ծագումը բացատրվում է ընտանիքի պատմությամբ, իսկ ընտանիքի պատմության բացարությունը պետք ե փնտուել տնտեսական զարգացման պատմության մեջ։

Յեղբոր գերեզմանի վրա հյուսը կտրելու արարողությունը մեղ հետաքրքրած գեպարում ապրել է ազգակցական հարաբերությունների այն ձևը, վորին նա պարտական է յեղել իր ծագմամբ։ Ահա ձեզ մի որինակ ավանդության այն ազդեցությանը, վոր մատնանշում և իր գրքի մեջ Լաբրիոլան։ Բայց ավանդությունը կարող է պահպանել միայն այն, ինչ արգեն զոյլություն ունի. Նա վոչ միայն տվյալ արարողության ծագումը կամ ընդհանրա-

*.) «Զակոն և օբյեկտ ա Կավказ», տ. II, стр. 75.

պես ավյալ ձեզ, այլ նույնիսկ նրա պահպանումը չի բացատրում։ Տրագիֆիայի ուժը՝ իներցիայի ուժն և։ Իգեղողիքաների պատմության մեջ հաճախ հարկադրված ես հարց տալ. ինչու ի՞ պահպանվել տվյալ արարողությունը կամ սովորույթը, չնայած դոր անհետացել են վոչ միայն նրան կյանքի կոչող հարաբերությունները, այլև նրան ցեղակից ուրիշ սովորույթները. կամ արտազողությունները, վորոնք միևնույն հարաբերություններից են առաջացել։ Այս հարցը համազոր և այն հարցին, թե ինչու նոր հարաբերությունների ավերիչ ազդեցությունը հենց այս արարողության կամ սովորույթի կողքով և անցել, վերացնելով ուրիշները։ Պատասխանել այս հարցին, տրագիֆիաների ուժը վկայութելով՝ նշանակում ե առամանափակվել այն դրական ձևով կրկնելով։ Ի՞նչպես ուրեմն ոգնել այս ցավին։ Պետք և դիմել հասարական հոգիբանարյանը։

Հին սովորույթներն անհետանում, հին արարողությունները խախտվում են այն ժամանակ, յերբ մարդիկ մտնում են նոր փոխադրձ հարաբերությունների մեջ։ Հասարակական շահերի պայքարն արտահայտվում և նոր սովորույթների և արարողությունների՝ հների գեմ պայքարելու կերպարանքով։ Վոչ մի սիմվոլիկ արարողություն կամ սովորույթ, ինչնըսինքան վեցրած, չի կարող ազգել վոչ դրական և վոչ բացասական իմաստով նոր հարաբերությունների զարգացման վրա։ Յեթե պահպանուղականները ջերմորեն պաշտպանում են հին սովորույթները, ապա այդ այն պատճառով, վոր նրանց մոքի մեջ իրենց համար սպատակար, թանգարին և սովորական հասարակական կարգերի պատկերացումը հիմնավորապես կապվում ե (ասսոցիացիա) այդ սովորույթների պատկերացման հետ։ Յեթե նորարարներն ատում և ծաղրում են այդ սովորույթները, ապա այդ այն պատճառով, վոր նրանց մտքում այդ սովորույթների պատկերացումը շաղկապվում և նրանց համար ճնշող, անողութակար ու անհաճո հասարակական հարաբերությունների հետ։ Հետևապես, ամբողջ բանն այսիդ իդեաների ասսոցիացիայի մեջ ե։ Յերբ մենք տեսնում ենք, վոր վորեն արարողություն վոչ միայն իրեն առաջացրած հարաբերություններն և ապրել, այլև իրեն ազգակից արարողությունները, վորոնք նույն հարաբերություններով են կյանքի կոչվել, ապա մենք պետք ե յեղակացնեաք, վոր նորարարների

մաքում նրա պատկերացումն այնպես ուժեղ կապված չե յեզել ատելի հնի պատկերացման հետ, ինչպես ուրիշ սովորույթների պատկերացումը։ Իսկ ինչու վոչ այնպես ուժեղ։ Նման հարցին պատասխանելը յերբեմն հեշտ ե, յերբեմն ել բոլորովին անկարելի՝ շնորհիվ հոգերանական անհրաժեշտ տվյալների պակասության։ Բայց նույնիսկ այն դեպքերում, յերբ մենք հարկադրված ենք նրան անլուծելի համարել, զոնե, մեր գիտելիքների արդի վիճակով հանդերձ, մենք պետք ե հիշենք, վոր այստեղ խնդիրը տրամադրության ուժի մեջ չե, այլ իդեաների վորոշ ասսոցիացիաների, վորոնք կյանքի յեն կոչվել հասարակության մեջ մարդկանց ունեցած վորոշ փաստական հարաբերությունների շնորհիվ։

Իդեալոցիաների պատմույթունը նեանակելի չափով բացատրվում է իդեաների ասսոցիացիաների ծագմամբ, փոփոխությամբ ու փաշնչացմամբ՝ հասարակական աւժերի հայտնի կոմբինացիաների ծագման, փոփոխման ու վոչնշացման ազգեցության տակ։ Լաբրիուան բանի այս կողմի վրա չի դարձրել այն ամբողջ ուշադրությունը, վորին նա արժանի յե։ Այդ լավ յերեան և գալիս փիլիսոփայության վերաբերմամբ նրա ունեցած հայցաքից։

XI

Լաբրիուայի կարծիքով՝ փիլիսոփայությունն իր պատմական զարգացման մեջ մասամբ միաձուլվում է թեոլոգիայի հետ, իսկ մասամբ ներկայացնում ե մարդկային մտքի զարգացումը սրբ առնչությամբ գեղի այն առարկաները, վորոնք մտնում են մեր փոքրի շրջանակի մեջ։ Վորչափով նա տարբեր և թեոլոգիայից, զրադվար և նույն խնդիրներով, վորոնց լուծմանն ե ուղղված հատկապես այսպես կոչված գիտական հետազոտությունը։ Ըստ վորում նա կամ ձգուում ե առաջ անցնել գիտությունից, տալով իր սեփական գուշակողական լուծումները, կամ ուղղակի յեղաշփում և հետագա տրամաբանական մշակման և յենթարկում այն լուծումները, վոր գիտությունն արդեն գտել ե։ Յեկ այդ, ինարկե, արդարացի յե։ Սակայն սա գեռ ամբողջ ճշմարառւթյունը չե։ Վերցնենք նոր փիլիսոփայությունը։ Դեկարտն ու Շեկոնը փիլիսոփայության կարկորագույն գործն են համարում բնագիտական գիտելիքների բազմապատկումը՝ բնության վրա մարդու ունեցած իշխանությունը մեծացնելու նպատակով։ Նրանց

ժամանակ փիլիսոփայությունը զբաղվում է, հետեւաբար, հենց այն միևնույն խնդիրներով, վորոնք բնական գիտությունների առարկան են հանդիսանում: Առաջի կարելի յէ կարծել, թէ նրա տված լուծումները վորոշվում են բնագիտության վիճակով: Սաւ կայն այդ ամբողջությամբ այդպես չե: Այն ժամանակվա բնական գիտությունների վիճակը չի կարող մեզ բացարձել Դեկարտի վերաբերմունքը դեպի փիլիսոփայական միքանի հարցեր, որինակ, գեպի հոգու հարցը և այն, բայց այդ վերաբերմունքը լով բացատրվում է այն ժամանակվա Ֆրանսիայի հասարակական կացությամբ: Դեկարտը խստորեն զատում է հավատի բնագավառը բայց բանականության բնագավառից: Նրա փիլիսոփայությունը չի հակառակ կաթոլիկանությանը, այլ ընդհակառակը, աշխատում է նոր նկատառումներով հաստատել նրա միքանի դոգմաները: Այս գեղագում նա լավ է արտահայտում այն ժամանակվա Փրանսացիների տրամադրությունը: XVI դարի յերկարատև ու արյունալի հուզումներից հետո Ֆրանսիայում ընդհանուր ձգտումն է առաջանում գեպի խաղաղություն և կարգ: Քաղաքականության բնագավառում այդ ձգտումն արտահայտվում է համակրանքով գեպի բացարձակ միասներությունը: Այսի բնագավառում՝ վարոշ կրոնական համբերատարությամբ և այն վիճելի հարցերից խուսափելու ձգտումն, վորոնք կիշեցնելին մոտիկ անցյալի քաղաքացիական պատերազմի մասին: Այդորինակ հարցեր եյին կրօնական հարցերը: Դրանք շշոշափելու համար՝ հարկավոր եր հավատի բնագավառը սահմանավատել բանականության բնագավառից: Հենց այդ եւ ինչպես մենք ասացինք, արել եւ Դեկարտը: Սակայն այդպիսի սահմանավատումը հերիք չեր: Հասարակական խաղաղության շահերից յեխնելով, փիլիսոփայությունը պետք է հանդիսավոր կերպով խոստավաներ կրօնական դոգմատի ճշտությունը: Հանձնին Դեկարտի նա այդ ել արագ: Յեկ ահա թէ ինչու այդ մտածողի սիստեմը, վոր առնվազը յերեք քառորդով մատերիալիստական սիստեմ եր, համակրանքով ընդունվեց շատ հոգեսր անձնավորությունների կողմից:

Դեկարտի փիլիսոփայությունից արամաբանորեն բղխեց Լոմետրիի մատերիալիզմը: Բայց նույնպիսի իրավունքով նրանից կարող եյին իդեալիստական յեզրակացություններ ևս հանվել: Յեթե Ֆրանսացիներն այդ չարին, ապա դրա համար կատարե-

լագիս վորոշակի հասարակական պատճառ կար: Դա յերբորդ դասի բացատրական վերաբերմունքն եր գեպի հոգմորականությունը՝ XVIII դարի Ֆրանսիայում: Յեթե Դեկարտի փիլիսոփայությունն աճել է հասարակական խաղաղության ձգտումից, ապա XVIII դարի մատերիալիզմը նախադրուշակում եր հասարակական նոր ցնցումներ:

Մրանից արդեն յերեսում է, վոր Ֆրանսիայում փիլիսոփայական մաքի ունեցած զարգացումը բացատրվում է վոչ միայն բնագիտության զարգացմամբ, այլ նաև անմիջական ազգեցությամբ, վոր զարգացող հասարակական հարաբերությունները պործել են նրա վրա: Այդ ավելի ևս դրսերպում է ֆրանսական փիլիսոփայության պատմության այլ կողմից ուշադիր նայելիք:

Մենք արդեն գիտենք, վոր Դեկարտը փիլիսոփայության գլխավոր խնդիր համարում եր բնության վրա մարդու ունեցած իշխանության ավելացումը: XVIII դարի ֆրանսական մատերիալիզմն իր կարևորագույն պարտականությունն է համարում հայտնի հին հասկացողությունների փոխարինումը՝ նորերով, վորոնց հիման վրա կարելի լիներ կառուցել նորմալ հասարակական հարաբերությունները: Հասարակական արտադրողական ուժերի ավելացման մասին ֆրանսական մատերիալիստների մոտ գրեթե խոսք անդամ չկա: Այդ շատ եյական տարբերություն է: Վերտեղից են առաջացել:

XVIII դարի Ֆրանսիայում արտադրողական ուժերի զարգացումը շատ ուժեղ կերպով նեղվում եր արտադրության հնացած հասարակական հարաբերություններից, արխայիկ հասարակական հիմնարկներից: Արտադրողական ուժերի հետագա զարգացման շահերի տեսակետից անպայմանարեն անհրաժեշտ եր վերտցնել այդ հիմնարկները: Նրանց վերացման մեջն եր այն ժամանակվա Ֆրանսիայի հասարակական շարժման ամբողջ իմաստը: Փիլիսոփայության մեջ այդորինակ վերացման անհրաժեշտությունն արտահայտվել եր վարպետ սպայքը հնացած վերացական հասկացողությունների գեմ, վորոնք աճել եյին արտադրության հնացած հարաբերությունների հողի վրա:

Դեկարտի զարաշարջանում այդ նույն հարաբերությունները դեռևս բնագավ հնացած չեյին. նրանք իրենց հողի վրա աճած

այլ հասարակական հիմնարկների հետ միասին՝ չեյին խանգարում արտադրողական ուժերի զարգացմանը, այլ ոժանդակում եյին դրան։ Ուստի և նրանց վերացման մասին այն ժամանակ վաշ վաք չեր ել մտածում անգամ։ Ահա թե ինչու փիլիսոփայությունն իր առաջ ուղղակի արտադրողական ուժերի մեծացման խնդիրն եր դրել՝ սկզբնավարվող բուրժուական հասարակության այդ կարևորագույն պրակտիկ խնդիրը։

Մենք այդ ասում ենք, Լարրիոլային առարկելով։ Բայց գուցե մեր առարկություններն ավելորդ են. կարող ե պատահել՝ նա միայն ճշտորոշ չի արտահայտվել, մինչեւ եյալեւ համաձայն ե մեզ հետ։ Մենք շատ ուրախ կլինեյինք դրան. ամեն մարդու հաճելի յե, յերբ նրա հետ համաձայնում են խելք մտադիկ։

Իսկ յեթե նա չհամաձայներ մեզ հետ, մենք ցավակցությամբ կրկնելու եյինք, վոր այդ խելքը մարդը սխալվում է։ Դրանով մենք գուցե առիթ տայինք մեր սուբյեկտիվ ծերունիներին մի ավելորդ անգամ քրքջալու այն առթիվ, թե պատմության մատերիալիստական ըմբռնման կողմնակիցների մեջ գժվար ե «իսկականներին» «վոչ-իսկականներից» տարբերել։ Բայց մենք կպատասխանեյնք սուբյեկտիվ ծերունիներին, վոր նրանք փրենց վրա լեն ծիծառում։ Այն մարդը, վոր ինքը լավ ե յուրացըել փիլիսոփայական սխտեմի իմաստը, կարող ե հեշտությամբ տարբերել նրա իսկական հետևորդներին կեղծերից։ Յեթե պ. պ. սուբյեկտիվիստները նեղություն կրեյին մի լավ խորհել պատմության մատերիալիստական բացատրության մասին, առա իրենք հենց կիմանային, թե վորտեղ են իսկական «աղակերտները», իսկ վորտեղ՝ ինքնակաչները, վորոնք զուր տեղն են մեծանուն կրում։ Բայց վարովնետև նրանք այդ նեղությունն իրենց չեն ավել և չեն տա, ուստի նրանք անհրաժեշտաբար կմնան միայն յերկմտության մեջ։ Բոլոր հետամնացների, առաջադիմության գործող բանակից հետացածների ընդհանուր ճակատագիրն ե այդ։ Ի գեալ՝ առաջադիմության մասին։ Դուք հիշում եք արդյօք, ընթերցող, այն ժամանակը, յերբ «մետաֆիլիկները» հայուանքների եյին յենթարկվում, փիլիսոփայությունն ուստումնասիրվում եր ըստ «Այուիսի» և մասամբ ել ըստ պ. Սպասովիչի «քրեական իրավունքի գառագրքի», և յերբ «Պրոդրեսիվ» ըն-

թերցողների համար հատուկ չափազանց պարզ ու փոքրահասակ յերեխանների համար անգամ համարականալի «Փորմուլներ» եյին հսարվել։ Փառավոր ժամանակ եր այդ նա, այդ ժամանակը, անցավ, չքացալ վորպես ծուխ։ «Մետաֆիլիկան» նորից սկսում է գրավել ուստի մտքերը, «Այուիսը» դուրս ե գալիք գործածությունից, իսկ Խիստահոչակ փորմուլներն ամենքից մոռացվում են։ Այժմ նույնիսկ իրենք՝ սուբյեկտիվ սոցիոլոգները, — վորոնք արդեն «հարգարժան» և «պատկառելի» յեն դարձել, — չափազանց հազվադեպ են հիշում այդ փորմուլները։ Աւշագրավ ե, որինակ, վոր նրանց վոչ վոք չիշեց հենց այն պահին, յերբ նրանց, ըստ յերեւութիւն, ամենածայրահեղ կարեքը կար, այսինքն՝ յերբ մեզ մոտ վիճաբանել սկսեցին այն մասին, թե կարող ենք մենք կապիտալիզմի ճանապարհից թեքվել ուտոպիայի ուղին։ Մեր ուտոպիստները թագնվեցին մի մարդու թիկունքում, վոր փանտաստիկ «Ժողովրդական արտադրությունը» պաշտպանելով հանդերձ՝ միաժամանակ արդի գիտելեկտիկական մատերիալիզմի կողմնակիցն եր հայտարարում իրեն։ Սովետացրած գիտելեկտիկական մատերիալիզմն այդպիսով ուշադրության արժանի միակ գենքը դուրս յեկավ ուտոպիստների ձեռքին։ Այդ նկատի ունենալով, խիստ ոգտակար կլիներ խոսել այն մասին, թե ինչպես են «առաջադիմությանը» նայում պատմության մատերիալիստական ըմբռնման կողմնակիցները։ Ճիշտ ե, այդ մասին արդեն մի անգամ չե, վոր խոսվել ե մեր մամուլի ենթորում։ Բայց, նախ՝ արդի մատերիալիստական հայացքը առաջադիմության մասին շատ բանով դեռ պարզ չե, իսկ յերկրորդ՝ Լաբրիոլայի մոտ նա պատկերվում է միքանի խիստ հաջող որինակներով և լուսաբանվում է միքանի շատ արդարացի խորհրդածություններով, թեպետ, գժբախտաբար, այնուամենայնիվ, սիստեմատիկորեն և ամբողջ լիակատարությամբ չի շարադրվում։ Լաբրիոլայի խորհրդագությունները պետք ե լրացվեն։ Մենք հույս ունենք անել այդ մի ավելի ազտու ժամանակ, իսկ այժմ ժամանակ ե վերջացնենք։

Բայց նախքան գրիչը ցած դնելը մենք մի անգամ ես ընթերցողին խնդրում ենք հիշել վոր՝ այսպես կոչված՝ տնտեսական մատերիալիզմը, վորի գեմ ուղղվում են մեր պ. պ. նարոդնիկների ու սուբյեկտիվիստների այն ել շատ անհամոզեցուցիչ առարկությունները, քիչ ընդհանուր բան ունի պատմության

Ժամանակակից մատերիալիստական ըմբռնման հետո Փակտորների թեորիայի տեսակետից մարդկային հասարակությունը ներկայացվում է վորպիս մի ծանր հակ, վորբին զանազան «ուժեր»—բարոյականությունը, իրավունքը, եկոնոմիկան և այլն—քաշում են ամեն մեկն իր կողմից պատմական ուղիով: Պատմության ժամանակակից մատերիալիստական ըմբռնման տեսակետից խնդիրը միանգամայն այլ կերպարանք և ընդունում: Պատմական «Փակտորները» սոսկ աբստրակցիաներ են գուրս գալիս, և յերբ չքանում են նրանց մասախուզը, պարզվում են, վոր մարդիկ կերպում են վոչ թե միքանի իրարից անջատ պատմություններ—իրավունքի պատմությունն, բարոյականության, փելիսուփայության պատմությունն և այլն.—այլ միայն մի հատ պատմությունն, իրենց սեփական հասարակական հարաբերությունների պատմությունը, վորոնք պայմանավորվում են յուրաքանչյուր տվյալ ժամանակի արտադրողական ուժերի վիճակով: Այսպիս կոչվող իդեոլոգիաները ներկայացնում են այդ միասնական ու անբաժանելի պատմություն սոսկ բազմազան արտացոլումները մտրդիմաց մտերի մեջ:



Թարգմանիչ Լ. Արովյան
Խմբագիր Տ. Ավետարյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Զիգենյան
Կանորու սրբագրիչ Լ. Արովյան

Դրամիտի Մազոր թ. Կ-2505, հրատ. թ. 641,
Պատվիր թ. 12, տիրած 10.000
Թղթի չափով $62 \times 94^{1/16}$ (38.480 տպ. նիշ 1 տպ. մամուլում)
 $3 \frac{1}{2}$ տպ. մամուլ, $1 \frac{3}{4}$ թերթ թուղթ.
Հանձնվել և արտադրության 20/1 1939 թ.
Ստորագրվել ե տպիտու 20/11 1939 թ.
Դինը 60 դ.

Գետիրատ—Թաղաքական գրականության հրատարակչության
տպարան, Յերևան, Ալահվերդյան թ. 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0146734

ФИЧ 60 ч.

Г. В. ПЛЕХАНОВ

О МАТЕРИАЛИСТИЧЕСКОМ
ПОНЯТИИ ИСТОРИИ

Армгиз—Издательство полит. литературы
Гревен, 1939